Azg
Հայկական օրաթերթ

13 ՄԱՅԻՍ 1998 ՇԱԲԱԹ # 83 (1586)

Թուրք պրոֆեսորը թքել է Ցեղասպանությունը պատկերող բացիկների վրա

ԵՐԵՎԱՆ, 12 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. ԱՄՆ Բերկլիի համալսարանում հայ ուսանողների ջանքերով կազմակերպվել է Հայոց ցեղասպանությանը նվիրված ցուցահանդես: Ինչպես տեղեկացնում է ամերիկահայ մամուլը, ապրիլի 24-ին համալսարանի Միջին Արևելքի բաժանմունքի իսլամական եւ պարսկական բաժնի ղեկավար թուրք պրոֆեսորն այցելել է ցուցահանդես եւ թքել սեղանին դրված թերթիկների վրա՝ բացականչելով, թե «կատարվածը ցեղասպանություն չի եղել, բայց երանի թե այդպես լիներ»: Հայ ուսանողի հետ վիճաբանելիս նա թքել է նաեւ ուսանողի վրա՝ ասելով, թե հայերը արժանի են ջարդվելու: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի, հայ ուսանողը դիմել է համալսարանի ոստիկանությանը, եւ այժմ գործը հետաքննվում է:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Կառավարություն, որ միշտ մեզ հետ է

ՆԱԲԻԼԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը երեքշաբթի ՀՀ նախագահի պաշտոնում առաջին անգամ եկավ խորհրդարան ներկա գտնվելու իր կառավարության կողմից ներկայացվող տնտեսական ծրագրի քննարկմանը: Ազգային ժողովի համար սա երրորդ կառավարության ծրագիրն էր, որ պետք է „հրաժարակվեր եւ ի գիտություն ընդունվեր անսայթաք, առանց անվստահություն հայտնելու սահմանադրական սպառնալիքի: Արմեն Դարբինյանն աղացուցեց իր աշխատունակությունը եւ զսպվածությունը: 3 ժամ 50 րոպե խորհրդարանական ամբիոնի առջեւ կանգնելով նա ընթերցեց իր բավական սվարածավալ ծրագիրը: Ապա պատասխանեց 30 պատգամավորների 100-ից ավելի հարցերին: Ակնհայտ եղավ իր եւ իր գլխավորած կառավարության հասցեին ուղղված բազմաթնույթ քննադատության: Ծրագրի ընդդիմախոսներին նա արձագանքեց զուսպ անգամ այն պարագայում, երբ իրեն համարեցին ոչ խաղաղական դեմք, այլ «արհեստավարժ տեխնոկրատ»: ՀՀ կառավարության գործունեության ծրագիրն ԱԺ-ում քննադատվեց եւ աջից, եւ ձախից: եղան նաեւ դրական գնահատականներ, ուստի նախ սկսենք դրականից (այն բավական սուղ էր):

Քաջալերիչ

«Երկրապահ» խմբակցության անդամ եւ խաղաղապահի նախկին պաշտոնակատար Կամո Արեյանն առաջինն աջակցեց կառավարությանը: Պետք է տարբերել ԱԺ-ին կառավարության կողմից ներկայացվող պետբյուջեի նախագծերը եւ տնտեսական ծրագրերը: Եթե առաջինը գործնական մեխանիզմներ եւ կոնկրետ ոլորտների զարգացման ծրագիր պարունակող փաստաթուղթ է, ապա երկրորդը խաղաղական հայեցակարգ պետության տնտեսական ռազմավարության ուղեգիծ:

ԱԺ ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Եղիազարյանը զուսպ դրական էր: «Եթե այս ծրագիրը համեմատենք նախորդ երկու կառավարությունների ծրագրերի հետ, ապա ոչնչով վատ չէ, դեռ որոշ հարցեր ավելի լավ են լուծվել: Ազատականության ոգին ավելի շատ է, քան մյուսների մեջ, իսկ ես հոգուս խորքում լիբերալ եմ»: Արմեն Եղիազարյանն ընդգծեց նաեւ, որ ծրագրում լուրջ ուշադրություն է դարձվել սվերային տնտեսության դեմ պայքարին հատկապես երկու ոլորտներում՝ մաքսային քերհայտարարագրման, եւ եկամուտների ծածկման: Դրական է նաեւ կոմունալ կենցաղային եւ այլ ծառայությունների ոլորտում կանխիկ վճարումներից հրաժարվելու կառավարության հաստատակամությունը:

Բանկային, ֆինանսական համակարգերին, պետական վիճակագրությանն ու սեփականաշնորհմանը, էներգետիկային ու տրանսպորտին վերաբերող գլուխները եւս, Արմեն Եղիազարյանի համոզմամբ, շարադրված են գոհացուցիչ (օրինակ՝ տ. Ֆանզի Արմեն Դարբինյանը եղել է ԿԲ փոխնախագահ, ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար, եւ այդ փորձառության արդյունքն ակներեւ է):

«Հանրապետության» խմբակցության անդամ Երջանիկ Աբգարյանը նմանապես բարյացակամ էր, ժամանակ տանք երիտասարդ կառավարությանն աշխատելու: Ոչ մի, անգամ ամենահրաշագործ կառավարություն այսօր ի զորու չի լինի հասարակության բոլոր խնդիրները լուծելու:

Տես էջ 2

ԱՅԺ

Բորիս Բերեզովսկին հոգնած տեսք ուներ...

Երեկ կեսօրին նախագահական պալատի նախասրահում հավաքված մի քանի տասնյակ լրագրողներս սպասում էինք ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ առանձնազրույց անցկացնող ԱՊՀ գործադիր քարտուղար Բորիս Բերեզովսկուն, որը երեւան էր ժամանել նույն առավոտյան: Նախապես ենթադրվում էր, թե պրն Բերեզովսկու հետ մեր ճեղազրույցը կայանալու է կեսօրվա 12:30-ին, սակայն ՀՀ նախագահի հետ երես առ երես հանդիպումը, ինչպես երեւում է, տեւել էր առնվազն մեկ ժամ ավելի: մենք մոսկովյան բարձրաստիճան հյուրին տեսանք 13:30-ին: Պրն Բերեզովսկին չափազանց հոգնած տեսք ուներ, խոսում էր այնքան ցածր ձայնով, որ իրենից ընդամենը մեկ մետր հեռու գտնվելով՝ հազիվ կարողանում էի որսալ առանձին բառեր (ցավոք, նրան «չի լսել» նաեւ լրագրողի իմ ձայնագրիչը): Հնարավոր է, որ դա զուտ ֆիզիկական հոգնածության արդյունք էր, սակայն միանգամայն հնարավոր է նաեւ, որ մոսկովյան հյուրը շատ էլ ոգեւորված չէր մեր նախագահի հետ իր հանդիպման արդյունքներից: Նրա առածներից հասկանալի դարձավ, որ նախագահ Քոչարյանի հետ քննարկել է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը, «փորձ է արվել» մերձեցնելու խնդրի խաղաղական կարգավորման մոտեցումները, շոշափվել են սահմանների անվտանգության հարցերը: Պատասխանելով լրագրողներից մեկի հարցին, թե համաձա՞յն է, արդյոք, որ Բերեզովսկին Ուզբեկստանի նախագահ Իսլամ Քարիմովի հետ, որ «ԱՊՀ գործադիր քարտուղարի պաշտոնը ոչ թե խաղաղական, այլ տնտեսական պաշտոն է», մոսկովյան հյուրը վկայակոչեց ԱՊՀ կանոնադրությունը եւ ընդգծեց, որ ինքն ու նախագահ Քոչարյանը համաձայն են, որ Համագործակցության ներսում հարաբերությունները պետք է կարգավորվեն այդ կանոնադրության շրջանակներում, հավասարության եւ փոխշահավետության սկզբունքներով: Թռուցիկ պատասխանելով նաեւ տեխնիկական համագործակցության մասին երրորդ եւ վերջին հարցին, որն Բերեզովսկին շնորհակալություն հայտնելով արագ հեռացավ: Ամենահաս լրագրողների շրջանում հայտնի դարձավ, որ Բերեզովսկու երեւանյան այցի ժամանակ ծրագրից հանված է Աշտարակում նախատեսված ճաշը, ինչպես եւ հասուկ չվերթով երեւանից Թբիլիսի թռչելը: Վարչապետ Արմեն Դարբինյանի հետ առանձնազրույցից հետո Բորիս Բերեզովսկին, ըստ մեր լուրերի, թռչելու է Մոսկվա:

ՌՈՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Դավիթ Վարդանյանը՝ ՀՀ նախագահին կից վերահսկողական ծառայության ղեկավար

ԱԺՄ վարչության եւ խորհրդարանում ԱԺ խմբակցության անդամ Դավիթ Վարդանյանը որոշ հաղորդումից հետո նախագահ Ռոբերտ Քոչարյանի առաջարկով համաձայնել է ստանձնել վերահսկողական ծառայության ղեկավարի պաշտոնը: Սա առաջին լուրջ նշանակումն է, որը վկայում է Ռոբերտ Քոչարյանի մտադրությունը՝ համագործակցել ոչ միայն ընտրություններում իրեն աջակից քաղաքական ուժերի, այլեւ մինչ ընտրություններն արմատական ընդդիմություն համարվող կուսակցությունների եւ գործիչների հետ:

– Ես համաձայնություն եմ տվել Ռոբերտ Քոչարյանին՝ աշխատելու վերահսկողական ծառայությունում, պետական ծառայությունը չպետք է դիտվի որպես հավատարմություն գործադիր իշխանության ղեկավարին, եւ կուսակցությունները չպետք է բարիկադների տարբեր կողմերում դիտվեն: Ինձ առաջարկվել էր այս պաշտոնը, մենք ԱԺՄ-ում քննարկեցինք եւ համաձայնեցինք: Ժամանակը ցույց կտա արդյունքը:

– Վերահսկողական ծառայությունում դուք պատրաստվո՞ւմ եք ընթացք տալու հանրապետությունում հայտնի եւ ԱԺՄ-ի կողմից բազմիցս վկայակոչված իշխանության նախկին դեմքերի պատասխանատվության կանչելու գործերին:

– Մենք Քոչարյանի հետ դեռեւս չենք քննարկել իրավասությունների կամ որեւէ մեկին պատասխանատվության կանչելու գործընթացը: Ամեն ինչ տեղի կունենա իրադարձություններին համեմատ: Բայց, համենայն դեպս, հանրապետության դատախազի դեր չեմ ստանձնելու, դա հստակ է:

Մինչեւ հիմա Հայաստանի քաղաքական համակարգն այնպիսին էր, որ թույլ չէր տալիս ընդդիմադիր համարվող կուսակցություններին աշխատել համակարգում: ԱԺՄ շատ անդամներ հեռացվել են աշխատանքից նույնիսկ կառավարության երկրորդական մարմիններում: ԱԺՄ կողմնակից է, որ հարաբերությունների այս եղանակը, մթնոլորտը փոխվի:

Ն. Դ.

Համանախագահները ժամանում են Երեւան

ԵՐԵՎԱՆ, 12 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Մայիսի 12-ին Երեւան են ժամանել Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահողներ Ժորժ Վոշիեն (Ֆրանսիա) եւ Լին Պասկոն (ԱՄՆ), իսկ մայիսի լույս 13-ի գիշերը Երեւան կժամանի Յուրի Յուկալովը (Ռուսաստան): Այս մասին «Նոյյան տապանի» թղթակցին հայտնեցին ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչությունից:

Նույն աղբյուրից հայտնեցին նաեւ, որ պատմիչանության անդամները մայիսի 14-ի առավոտյան կմեկնեն Ստեփանակերտ, հաջորդ օրը կվերադառնան Երեւան, իսկ մայիսի 16-ի առավոտյան կմեկնեն Բաքու: Նախատեսվում է, որ այցի շրջանակներում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահողները մայիսի 13-ին կհանդիպեն ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի, իսկ մայիսի 15-ին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ:

Եվրամիությունից 4-ական մլն դոլար Վրաստանին ու Ադրբեջանին, 2 մլն Հայաստանին

ԵՐԵՎԱՆ, 12 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Մայիսի 12-ին Եվրամիությունը հատատել է Ադրբեջանին, Վրաստանին եւ Հայաստանին մոտ 9 մլն դոլարի մարդասիրական օգնություն հատկացնելու ծրագիրը: Ինչպես հաղորդել է «Ազատություն» ռադիոկայանը, գումարները տեղ են հասցվելու ոչ կառավարական կազմակերպությունների միջոցով:

Եվրամիությունը նշել է, որ այդ տարածաշրջանի հակամարտությունների լուծման բանակցությունները դեռեւս ընթացքում են, սակայն հարյուր հազարավոր մարդիկ տեղահանված են, եւ օգնությունը նպատակ ունի սատարել ամենատուժածներին: Գումարները ուղղվելու են երեխաների սննդի, բժշկական եւ գյուղատնտեսական վերականգնման օգնության: Վրաստանը եւ Ադրբեջանը կստանան մոտ 4-ական մլն դոլարի օգնություն, իսկ Հայաստանը՝ մոտ 2 մլն:

Բնակչության կեսից ավելին՝ «աղքատ» եւ «շատ աղքատ»

ԵՐԵՎԱՆ, 12 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Ըստ ՀՀ վիճակագրության տվյալների, 1997 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հայաստանի ընտանիքների 27 տոկոսը պատկանել է «աղքատ», իսկ 27,7 տոկոսը՝ «շատ աղքատ» կատեգորիային: Միայն 45,3 տոկոսն է համարվել «ոչ աղքատ»:

Ըստ նախարարության, «շատ աղքատ» են համարվել այն ընտանիքները, որոնց մեկ շնչին ընկնող ընթացիկ ծախսերը ցածր են այսպես կոչված «պարենային գծից», որը կազմում է ամսական 6612 դրամ: «Աղքատ» են համարվել այն ընտանիքները, որոնց մեկ շնչին ընկնող ընթացիկ ծախսերը ցածր են այսպես կոչված «աղքատության գծից» կամ միջին սպառողական զամբյուղի արժեքից, որը հավասար է 10784 դրամի:

Շատ աղքատ ընտանիքները առավել շատ են աղեսի գոտում եւ սահմանամերձ շրջաններում: Երեւանում «աղքատ» են ընտանիքների 27,3 տոկոսը, «շատ աղքատ»՝ 30.9 տոկոսը:

ԵԿԵՂԵՑԻ

Պոլսո հայոց պատրիարքի աթոռի չորս թեկնածու, ընտրությունները՝ մայիսի 17-ին

Չորս թեկնածու հավակնում են Ստամբուլի հայոց պատրիարքի տեղին, որը թափուր է մարտի 10-ից, երբ մահացավ պատրիարք Գարեգին Գազանճյանը:

Ենթադրվում էր, որ պատրիարքի աթոռը կգրաղեցնի ժամանակավոր պաշտոնակատար Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը: Սակայն, տեղի համար հայտ են ներկայացրել եւս երեք: Շահան արքեպիսկոպոս Սվաջյանը (որը վերջին ընտրություններում զիջեց հանգուցյալ պատրիարք Գարեգին արք. Գազանճյանին շատ փոքր տարբերությամբ), Մայր աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը եւ Երուսաղեմի միաբանության անդամ Վիգեն եպիսկոպոս Այվազյանը, որը ներկայումս Հայաստանում է:

Թեկնածուները ծնվել են Թուրքիայում, ինչը պատրիարքի տեղը զբաղեցնողի համար անհրաժեշտ պայման է, համաձայն թուրքական օրենքների:

Այժմ Թուրքիան կառավարությունը պատրաստվում է հայտարարել ընտրությունների ընթացակարգը: Առաջարկություն կա, որ խվեարկի թուրքահպատակ ողջ հայ բնակչությունը:

Ընտրությունները կանցկացվեն մայիսի 17-ին:

ԱՐԱՐԱՏԻ ՍԻՐՈՒ ԱՓԵՊԵՏՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ
ԸՄԲԱԳԻԿ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Կառավարություն, որ միշտ մեզ հետ է

Սկիզբը էջ 1

Հանդիմանիչ

Ծրագիրը բարի ցանկությունների հռչակագիր է, որ բացակայում են հռչակված նպատակներին հասնելու մեխանիզմները կամ ինչպես երջանիկ Աբգարյանը չարենցաբար ձեւակերպեց՝ ի՞նչ ունենք, ո՞ւր ենք գնում եւ ինչպե՞ս երեկ արդեն ծանուցել էինք, կառավարությունը խոստանում է մոտակա տարիներին հանրապետության մեկ շնչին ՀՆԱ-ից բաժին հանգել 1000 դոլար, այսօր այդ բաժինը 537 դոլար է:

Պատգամավորները հույժ կասկածեցին եւ ապա բվաբանորեն հաշվեցին, որ խոստացված 6 տոկոս աճի դեպքում Հայաստանը կհասնի բաղձալի 1000 դոլարի ցուցանիշին՝ 10-15 տարվա ընթացքում, ինչն, անշուշտ, դժվար է համարել մոտակա: Վարչապետ Արմեն Դարբինյանը, ինչպես նաեւ նրա հավատարիմ զինակից նախարարները, հաստատակամ էին՝ խոստացված 6 տոկոս աճը նվազագույն ցուցանիշն է, տնտեսության փաստացի աճը կարող է հասնել մինչեւ 10 տոկոս եւ ավելի, որի դեպքում ծրագրային դրույթները կդառնան իրատեսական: Նշենք՝ 98 թ. առաջին եռամսյակում գրանցվել է ՀՆԱ 6,4 տոկոսի աճ, որի 4,6 տոկոսը պայմանավորված է հարկային վարչարարության բարելավմամբ, այսինքն՝ ոչ թե իրական աճ է տեղի ունեցել, այլ ստվերային տնտեսությունից մի զգալի մաս երեւակվել է:

Հաջորդ թիրախն արտաքին քաղաքականությունն էր, որը ծրագրում շարադրված է խիստ հղանցիկ՝ ի մասնավորի ԼՂՀ կտրվածքով: Պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի, ինչպես նաեւ Հովհաննես Իգիթյանի պնդմամբ, ԼՂՀ հարցի կարգավորման փուլային տարբերակին վերաբերող հատվածը պետք է լրացվի ազգերի ինքնորոշման սկզբունքով, քանզի «փուլային տարբերակով էլ կարելի է Ղարաբաղը հանձնել»: Ծրագրում բացակայում էր Հայաստան-Ռուսաստան, Հայաստան-Թուրքիա, Հայաստան-Վրաստան եւ ընդհանրապես մեր արտաքին հարաբերությունների պարզաբանումը: Արմեն Դարբինյանը վերջին միանգամայն էր՝ արտաքին քաղաքականությունը պարզաբանելու:

ԱԶԳ

ՈՄԲԱՑԻԿ

ՍՓՅՈՒՌՔ-ՀԱՅՐԵՆԻՔ

Ստեփանակերտն աղահովվեց խմելու ջրով

Այսիսի 7-10-ը ԼՂՀ Հանրապետությունում էր «Հայաստան» համահայկական հիմնադրամի Տորոնտոյի (Կանադա) մասնաճյուղի հանձնախումբն ատենադրեց Մկրտիչ Մկրտիչյանի գլխավորությամբ:

Վաղ առավոտից Ստեփանակերտի նորակառույց «Լոտոս» հյուրանոցից հանձնախումբն առաջին հերթին այցելեց Ստեփանակերտի զոհվածների հուշահամալիր, որի ճարտարապետը Յուրի Հակոբյանն է: Նրանք Տերունական աղոթքով ու մեկ րոպե լռությամբ հարգեցին Լեռնային Ղարաբաղի ազատագրական պայքարում զոհվածների հիշատակը եւ շտաբեցին Ստեփանակերտի Հովի-ի Թորոսյանի ստեղծագործությունները: Ստեփանակերտի օրակածեւ ջրատարի ու աղբյուր-հուշարձանի բացումը որի ոգով ծրագիրը ֆինանսավորել է հիմնադրամի Տորոնտոյի հայկական համայնքը: Իսկ աղբյուրը նվեր էր պատվավոր հյուրերին կառավարության կազմակերպության կողմից: Բացման արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, արտգործնախարար Վարդան Օսկանյանը, ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, վարչապետ Լեոնարդ Պետրոսյանը, «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրեն Բաֆֆի Հովհաննիսյանը, Ստեփանակերտի քաղաքապետ Յուրի Ղազարյանը, հիմնադրամի ներկայացուցիչ Բորիս Ալավերդյանը, Տորոնտոյի հայկական համայնքի անդամները: Ստեփանակերտի փոխքաղաքապետը ողջունեց հյուրերին եւ խոսք տվեց Գագիկ Հարությունյանին: Պրն Հարությունյանը նշեց, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամը ԼՂՀ-ում բազմաթիվ ծրագրեր է իրականացրել, այս ջրատարի ծրագիրը նրանցից մեկն է, որ սկիզբ է առել 1994 թ-ի Կանադա այցելած ժամանակ, որին իր մասնակցությունն է բերել ու իրագործել հիմնադրամի Տորոնտոյի հայկական համայնքը: Այսօր այդ ծրագիրն իրողություն է դարձել:

Բաֆֆի Հովհաննիսյանը ողջույնից հետո ավելացրեց, որ հիմնադրամի անդամներ Ստեփանակերտի փոխքաղաքապետը ոգջունեց հյուրերին եւ խոսք տվեց Գագիկ Հարությունյանին: Պրն Հարությունյանը նշեց, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամը ԼՂՀ-ում բազմաթիվ ծրագրեր է իրականացրել, այս ջրատարի ծրագիրը նրանցից մեկն է, որ սկիզբ է առել 1994 թ-ի Կանադա այցելած ժամանակ, որին իր մասնակցությունն է բերել ու իրագործել հիմնադրամի Տորոնտոյի հայկական համայնքը: Այսօր այդ ծրագիրն իրողություն է դարձել:

Բաֆֆի Հովհաննիսյանը ողջույնից հետո ավելացրեց, որ հիմնադրամի կողմից Արա Քոչարյանը կհանձնի հուշանվերներ հիմնադրամի հոգաբարձության նախագահ Ռոբերտ Քոչարյանին, ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանին եւ ԼՂՀ վարչապետ Լեոնարդ Պետրոսյանին:

Այնուհետեւ ձայնը տրվեց ՀՀ նախագահի դաշտոնը ստանձնելուց հետո առաջին անգամ ԼՂՀ ժամանած Ռոբերտ Քոչարյանին:

- Սիրելի հայրենակիցներ, երբ մի շնչ կառուցելն իր վերջնական ավարտով երեւացող գործ է, սա կայն ֆաղաքի կենսունակության, բնակչության համար այս ջրատարի նշանակությունը ուղղակի ինձ համար որոշեց ստեփանակերտցու: Հաս լավ հասկանալի է, քաղաքի կեանքի համար որքան անհրաժեշտ է ջուրը: Ես հիանալի գիտեմ, թե ինչ դժվարություններ ունեցան ստեղծագործողները, որոնցով անցյալում են խոդվակները: Ուզում եմ շնորհակալություն ասել Տորոնտոյի հայությանը, որ իր խոսքը խոսք մնաց եւ գործը գործ մնաց: Եվ շատ հաճելի է, երբ խեցի առնով չի եզրափակվում ծրագրերի իրականացումը: Օգտվելով առիթից ես մի քանի խոսք եմ ուզում ասել հիմնադրամի մասին: Այն, իմ կարծիքով, ոչ միայն բարեգործություն է, այլեւ այսօր դեմ է դառնում մեզ համար մտածելակերպ Հայաստան-Ղարաբաղ-սփյուռք միաբանելու գաղափարախոսության խորհրդանիշը: Մեզանից է կախված կլինի՞, թե՞ ոչ: Իմ կողմից, իբրեւ ՀՀ նախագահի, արվելու է ամեն ինչ, որ հայը իրոք իրեն զգա եւ հայաստանցի, եւ ղարաբաղցի, եւ սփյուռքահայ: Մենք մեկ ժողովուրդ ենք, մեկ ազգ ենք եւ այդ գաղափարախոսությունը մեր փայլուն ապագայի գաղափարախոսությունն է: Ես հատկապես եմ ճիշտ քաղաքականություն վարելու դեպքում, մենք հիմնադրամի միջոցով, նրա ակտիվ գործունեության միջոցով կհասնենք այն նպատակներին, որը ունենք:

Աղբյուրի ժապավենը կտրելու պատիվը վերադարձվեց Ռ. Քոչարյանին, Բաֆֆի Հովհաննիսյանին եւ Մ. Մկրտիչյանին: ԼՂՀ-ի հիմնի երգի հնչյունների տակ կտրվեց ժապավենը եւ բացվեց ջրի ծորակը, որից մեծ արագությամբ հոսեց ջրի առաջին շիթը, որը եւ



հիշեցրեց եւ շտաբեցին Ստեփանակերտի Հովի-ի Թորոսյանի ստեղծագործությունները: Ստեփանակերտի օրակածեւ ջրատարի ու աղբյուր-հուշարձանի բացումը որի ոգով ծրագիրը ֆինանսավորել է հիմնադրամի Տորոնտոյի հայկական համայնքը: Իսկ աղբյուրը նվեր էր պատվավոր հյուրերին կառավարության կազմակերպության կողմից: Բացման արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, արտգործնախարար Վարդան Օսկանյանը, ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, վարչապետ Լեոնարդ Պետրոսյանը, «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրեն Բաֆֆի Հովհաննիսյանը, Ստեփանակերտի քաղաքապետ Յուրի Ղազարյանը, հիմնադրամի ներկայացուցիչ Բորիս Ալավերդյանը, Տորոնտոյի հայկական հանձ

Պետական առողջապահական գործակալությունից փուլ առ փուլ՝ դեպի բժշկական պարտադիր ապահովագրություն

Ինչպես տեղեկացրել ենք, առողջապահական համակարգի զարգացման համար ՀԲ կողմից նախատեսված 10 մլն դոլար վարկի հիմնական բաժինը՝ 6,5 մլն դոլար, տրամադրվելու է առողջության առաջնային պահպանման ծրագրին, մնացած 3,5 մլն դոլարը նպատակահարմար է դիտվել հատկացնել 1997 թ. ՀՀ կառավարությանն առընթեր ստեղծված պետական առողջապահության գործակալության կայացմանը: Գործակալության պետը՝ Արարատ Մկրտչյանն, արարատցի է, այս պաշտոնին անցնելուց առաջ կատարել է հանրապետության գլխավոր պետական սանիտարական բժշկի պարտականությունները: Երեկ առողջապահության նախարարությունում հրավիրված մամուլի ասուլիսում, գործակալության ստեղծումը հիմնավորելով բժշկական ծառայություններ իրագործող եւ պետպատվեր տեղադրող մարմինների տարանջատման ուղղությամբ հանդես գալու հրամայականով, պրն Մկրտչյանը ներկայացրեց նորաստեղծ պետական մարմնի կանոնադրության հիմնադրույթները: Դրանք են՝ պայմանագրերի կնքում պետպատվերի սահմաններում իրականացնող բուժօգնությունն իրագործող հաստատությունների հետ, մատուցված բժշկական ծառայությունների դիմաց վճարումների իրականացում եւ որակի վերահսկում:

Այս կառույցը 1999 թ. հունվարի 1-ից կփոխարինի ներկայումս առողջապահական հիմնարկներում պետպատվեր տեղադրող 12 կառույցներին (առողջապահության նախարարություն, Երեւանի քաղաքապետարան, մարզերի առողջապահության բաժիններ), որ մի կողմից տեղադրում են պետպատվերը, մյուս կողմից ֆինանսավորում եւ վերահսկում վերջինիս որակը, ինչը, կոպիտ ասած, անհեթեթություն է:

«ՀԲ վարկի այդօրինակ օգտագործումն առողջապահության համակարգի բազմաթիվ հիմնախնդիրների առկայությամբ միջոցների մսխում չէ՞» հարցին պրն Մկրտչյանը հարցով պատասխանեց. «Մենք երբեւէ պարտադիր բժշկական ապահովագրություն ունենալո՞ւ ենք»: Գործակալությունը փաստորեն պարտադիր ապահովագրության նախակարապետն է, իսկ վերջինս՝ առողջապահության համակարգի ապագան, ասաց նա: Մերձբալթիկայում, 1993 թ.-ից՝ Ռուսաստանում, նախորդ տարվանից՝ հարեւան Վրաստանում, ապահովագրության համակարգը ներդրված է, սակայն, ի տարբերություն Վրաստանի «հախուռն» գործելակերպի, Հայաստանում որոշել են անցումը հնարավորին չափ սահուն՝ «գործակալությունից փուլ առ փուլ դեպի ապահովագրություն» տարբերակով իրագործել:

Պետական առողջապահության գործակալությունն առ այսօր ոչ մի դոլար չի ստացել եւ չի ստանալու ՀԲ-ից, հայտարարեց պրն Մկրտչյանն՝ անուղղակիորեն պատասխանելով բերբերի այն հրապարակումներին, որտեղ գործակալությունը (ավելի ճիշտ՝ Արարատ Մկրտչյանը) միլիոնատիրոջ կարգավիճակով է ներկայացվում: ՀԲ գումարները տրամադրվում են ծրագրի իրականացմանը՝ կառույցի կայացում, կադրերի պատրաստում (ուսուցում), վերլուծական-տեղեկատվական համակարգի հիմնում եւ այլն: 35 հոգանոց անձնակազմի աշխատավարձը (12-16 հազար դրամի սահմաններում) հոգում է պետությունը: Պետբյուջեից տրամադրվող գումարները «կգնան հիվանդի հետեւից», այսինքն, պետությունը պիտի վճարի կոնկրետ հիվանդի, հիվանդության համար, ոչ թե գումարներ հատկացնի անորոշ հասցեներով՝ ահա պետական առողջապահության գործակալության խնդիրներից մեկը, ասաց պրն Մկրտչյանը: Ըստ նրա, այս տարվա 4-րդ եռամսյակում գործակալության աշխատանքը կփորձարկվի՝ հիմք դառնալով 1999 թ.-ին նախատեսված «լայնահուն» աշխատանքի համար:

ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Մետրոպոլիտենը թերբեռնված է աշխատում

70-ական թվականներին առաջադրված մետրոշինարարության նախագծի իրականացումը ամենից առաջ նպատակ էր հետապնդում բարելավել երեւան քաղաքի էկոլոգիական վիճակը: Այդ ժամանակաշրջանում ամբողջ հզորությամբ աշխատող արդյունաբերական ձեռնարկություններ եւ նաեւ խիտ ցանց ունեցող քաղաքային տրանսպորտի արտանետած թունավոր գազերի քանակը զգալի տոկոս էր կազմում: Ուստիեւ անհրաժեշտություն էր առաջացել կրճատելու քաղաքային տրանսպորտի երթուղիների վազքը գոնե քաղաքի կենտրոնական շրջաններում:

Երեւանի մետրոպոլիտենը շահագործման է հանձնվել 1981-ին, որի կանգառները տեղակայված են կամ արդյունաբերական, կամ էլ առեւտրի կենտրոնների հարեւանությամբ: Մետրոն միշտ էլ ամենաէժան փոխադրամիջոցն է համարվել, եւ հարմարավետ: Չնայած նկատելի առավելություններին, այսօր մետրոպոլիտենի 1 օրվա ուղեւորափոխադրման ծանրաբեռնվածությունը կազմում է 50 հազար, մինչդեռ 1994-ին օրվա հոսքը կազմում էր 250 հազար ուղեւոր: Օրական պտույտի է հանվում 9 գնացք, իսկ գնացքների կիսադատարկ վագոնը բացատրվում է գործարանների չաշխատելով եւ քաղաքային տրանսպորտի համակարգված աշխատանքով: Ունեն կադրերի (մեքենավարների) պակաս: Ներկայումս կադրեր է պատրաստում Երեւանի թիվ 29 տեխնիկական ուսումնարանը, որը համապատասխան մասնագիտական որակ չի ապահովում: Բայց եւ նշում են, որ դեռեւս ոչ մի երկաթուղային վթար չի գրանցվել: Մի քանի փուլով գործադուլ կազմակերպած մեքենավարները այսօր ստանում են 50 հազար դրամ աշխատավարձ:

Բոլոր ժամանակների եւ ընդհանրապես նման, մեր մետրոպոլիտենը նույնպես հնարաճախսածածկումով չի աշխատում: Այն պետական ձեռնարկություն է եւ պետության կողմից դոտացիա է ստանում տարեկան 800 մլն դրամի չափով: Երեւանի մետրոպոլիտենի վարչությունում մետրոպոլիտենի գործադիր տնօրենի տեղակալ Արմենակ Զորյանից տեղեկացանք, որ տրամադրված գումարով հնարավոր չէ «եղանակ» ստեղծել, որովհետեւ միայն 1 կմ մետրոշինարարության համար պահանջվում է 20 մլն դոլար, իսկ դեպի Աջափնյակ ձգվող թունելի շինարարական աշխատանքների 10 տոկոսն է իրականացված:

Տրամադրված 800 մլն դրամից 300 մլն-ը նախատեսվում է կապիտալ վերանորոգումների համար, այնուհետեւ պետք է ներդրումներ անել շարժասանդուղքների, երկաթգծերի, գնացքների, վագոնների վերանորոգման, պահեստամասերի ձեռքբերման համար: Եվ ահա ցանկացած աշխատանք կատարելու դեպքում ուղիղ կախում է առաջանում պետբյուջեից: Մետրոպոլիտենը ստացել է ՊՓԲԸ կարգավիճակ, բայց դեռեւս որեւէ բաժնետեր ներդրում չի արել:

Հ.Գ. Ի դեպ, մետրոպոլիտենի «գլխին» կատարյալ չարիք է դարձել «Զորավար Անդրանիկ» կայարանի տարածքում սփռված տուկան, որի համար հիմք է ծառայում գետնի տակ փորված թունելը: Չնախատեսված ծանրության պատճառով թունելի պատերին եւ առաստաղին ճաքեր էին առաջացել, որոնք կբերեին անկանխատեսելի փլուզումների: Պատերը ամրացվել են եւ ասում են, որ անվտանգությունն ապահովված է, բայց թե՛ մետրոպոլիտենի ղեկավարությունը, թե՛ փորձագետները պնդում են, որ տուկան այլ տարածք տեղափոխելն անհրաժեշտություն է:

Նաեւ արժե անդրադառնալ հարաբերական էժան փոխադրամիջոց հասկացողությանը: Մետրոյով երթեւեկելը արժե 40 դրամ: Սակավաթիվ են այն հաջողակները, ովքեր դրամարկղ մուծած 50 դրամից 10 դրամ մանրը ետ են ստանում: Այսպիսով, ավելի «հարմեսների» համար մետրոյով երթեւեկելն արժե 50 դրամ:

ԱՐԵՎԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Ոտանավորություն

Մենք բոլորս վախեցած մարդիկ ենք, պարոն նախագահ

Ի՛մ առաջին ծանոթությունը Ձեզ հետ կայացել է շատ տարիներ առաջ, Մոսկովյան հեռուստատեսությամբ տված Ձեր մի հարցազրույցով, որի ընթացքում հակառակ Ձեր զրուցակցի Ձեզ ընկճելու, ծունկի բերելու ծիգերին, Ձեր կեցվածքը ուժեղ, անհողդողդ եւ հպարտ մարդու էր: Ես, ինձ հետ էլ Ձեզ լսող ամեն մի հայ չէր կարող հպարտության զգացում չունենալ:

Վարչապետի պաշտոնում Դուք փոխարինելու եկաք մեկին, որն այնքան կարճ ժամանակում հույս ու հավատ ներշնչեց տեւական մղձավանջ ապրող ժողովրդին, բայց ավա՜ղ, նա ինչպես ասուպի նման եկավ, այնպես էլ ասուպի նման գնաց, ասուպի պես պայծառ հետք թողնելով իր հետեւից: Դուք Ձեր առաջին քայլերով, գոնե ինձ աչքում, հիշեցնում էիք նրան: Դուք քայլ առ քայլ մերձեցաք ժողովրդին, մխրճվեցիք նրա կյանքի եւ դեկավարի Ձեր դերի մեջ: Երաշխիքներ տվեցիք, որ լինելու եք պատվաստ դեկավար, եւ հանդիսանալու եք ժողովրդի պատվով ապրելու եւ

մակերեսությունը: Կոմերիտմիությունն ու կոմկուսը ներարկել էին մեզ: Բայց վախենում էինք, այն էլ ինչպես, եւ թաքցնում էինք մեր վախը մեկս մյուսից, անգամ ինքներս մեզանից:

Առիթ պետք չէ, որ վախն արթնա մեր մեջ, նա մշտապես արթուն է: Ի՞նչ պետք է մեր կյանքում կատարվի, որ որեւէ կողմից որեւէ վտանգ չզգանք եւ վախը նիրհի մեր մեջ, ու հանգիստ առնենք:

«Արջի ծառայությունից» խուսափել Դուք չեք կարող: Ձեր ողջ գործունեության ընթացքում այն ուղեկցելու է Ձեզ: Վախենալու-պատճառ է նաեւ այդ:

Նախագահական ընտրապայքարի օրերին, լրագրողների հետ ունեցած Ձեր բազում ասուլիսներից մեկի ժամանակ հավատացրիք, որ մեծ կարեւորություն եք տալիս չորրորդ իշխանությանը, եւ մեծապես հենվելու եք նաեւ նրա վրա:

Ասվում է վստահիր, բայց եւ ստուգիր:

Չորրորդ իշխանությունը, հատկապես հեռուստատեսությունն ու ռադիոն, նախագահական ընտրությունները եռանդով լուսաբանելու համար դրվատվեցին արդարացիորեն:

Բայց...

Ահա եւ մեր հեռուստաէկրաններին հայտնվում է հերթական սիրունատես հեռուստալրագրողուհին եւ զրնգուն ձայնով ավետում «Ես գտնվում եմ գրողների միության մուտքի առջեւ... Եվ միանգամից բարձրանում եմ երրորդ հարկ». Գիտեցողը տխուր կժպտար «Իսկ ինչո՞ւ առաջին եւ մանավանդ երկրորդ հարկի վրայով, ուր գրողների միության ղեկավարությունն է նստում, ցանասեր լրագրողուհի, լոկ տալով, սուրացիր միանգամից երրորդ հարկ: Դեռ երեկ լրագրող-լրագրողուհի այս մուտքից ներս էր մտնում, լոկ տալիս միայն առաջին հարկի վրայով: միանգամից հայտնվում երկրորդ հարկում, գործն ավարտած համարում ու հեռանում: Մոռացած, որ կա նաեւ երրորդ հարկ, որը մեկ-երկու տարի առաջ աղետի էր ենթարկվել, «թուրքը» խուժել էր այնտեղ, ասպատակել ու ավերել, ջարդել ու դռները կնիքելով հեռացել: Հետո դռները վերաբացվել էին, նույն մարդիկ էին այնտեղ նստում, բայց հիշող չկար:

Այսօր ի՞նչ էր տեղի ունեցել:

«Մերոնք» դարձել էին «նրանք» ու գնացե՞լ, եւ «նրանք» դարձել էին «մերոնք» ու վերադարձե՞լ:

Գրողների միությունում, իր ստեղծման օրից, տասնամյակներ ի վեր, «մերոնք» ու «նրանք» հասկացողություն չի եղել: Այն կուռ ու միասնական, մշակույթի մի թեժ օջախ էր, ստեղծագործական մի ընտանիք, ժողովրդի մեջ վայելում էր մեծ հեղինակություն, իշխանություններին պարտադրել էր հաշվի նստել իր հետ: Նախագահության Ձեր մրցակից Կարեն Դեմիրճյանը, պարոն նախագահ, որի մասին չի կարելի ասել, թե տառապում է համեստության բարդույթով, հայկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար եղած ժամանակ, տարվա մեջ մեկ-երկու անգամ ինքն իր ոտքով գալիս էր գրողների միություն, գրողների հետ ասուլիսի նստում, լսում նրանց բարձրացրած ամենատարբեր բնույթի հարցերը, լինի ժողովրդի հոգսերին, պատմությանը, արվեստին, մինչեւ իսկ յուրաքանչյուրի նեղ անձնական կյանքին ու կենցաղին վերաբերող:

Այս լավ հայտնի էր կոմունիստական վարչակարգին փոխարինելու եկածներին, որոնք ասպարեզ իջնելուն պես որդեգրեցին «բաժանիր, որ տիրես» սկզբունքը: Ժողովրդական տնտեսությունը քարուքանդելուն զուգընթաց, նրանք հասարակության ջլատումը սկսեցին գրողների միությունից: Պառակտեցին գրողների միությունը, մեջտեղ հանելով ամբարիշտներից կազմված մի խմբավորում, կոչելով գրողների միություն: Այս երկուսի միջեւ հրահրվեց տարիներ տեւող մի ամոթալի գզվռտոց, հանրության աչքում վարկաբեկելով եւ իսպառ հեղինակազրկելով գրողներին ու գրողների միությունը: Նորահայտ կեղծ միությունը այնքան բացահայտորեն էր հովանավորվում «վերեւներից», որ նրա ձեռքին հայտնվել էր արքիսրաժի մի որոշում, դրանով նա սպառնում էր միության շենքից վտարել օրինական տերերին: Շարունակաբար հրահրվող գզվռտոցը գրողների օրինական եւ անօրինական միությունների մեջ տեւեց այնքան ժամանակ, մինչեւ օրինական գրողների միության նախագահ կարգվեց վերեւներին հաճո, ասեմ նաեւ, որ մեզ բոլորիս նույնպես հաճո՞ եւ ընդունելի մեկը եւ անմիջապես, նույն օրնեւեթ գետնի տակն անցավ գրողների անօրինական միությունը, ծեռքին եղած արքիսրաժի որոշման հետ: Ինչու այդ շուտ չէր արվում, եթե «վերեւների» ուզածը միայն այդ էր: Միայն այդ չէր: Գրողների միությունը շունչն արդեն փչել էր, նրանց ուզածն այս էր

Նույնպիսի խաղ խաղացվեց մեր ողջ հասարակության գլխին: Խաղելով այն կարույց առ կարույց: Իշխանության գալուն պես, նրանք մեկնեցին այդ կարույցներից: Հեռացին «հներին» եւ տեղը լցրին ուրճարաներում օր ծքնեցնող անբան «մերոնականներով»:

Դրա պտուղները «վայելում ենք» այսօր, եւ դեռ երկար ենք «վայելելու»:

Նախագահական ընտրապայքարի ամենաթեժ օրերից մի օր մարտի 20-ին մամուլի ուշադրությանն արժանացավ մի միջադեպ, որի կենտրոնում էին ներքին գործերի ծառայության մի խումբ ներկա աշխատակիցներ, ներքին գործերի ծառայության մի խումբ նախկին աշխատակիցներ, որոնք նախագահական թեկնածու Կարեն Դեմիրճյանի թիկնապահ խմբի մեջ էին ընդգրկված, եւ ներքին գործերի ծառայության մի խումբ այլ նախկին աշխատողներ, որոնք այսօր նախկին դարձած նախարարի հետ տեղափոխվել, աշխատանքի էին անցել քաղաքապետարանում: Վտարված «նախկինները» վերադարձել ու իրենց տեղերում վերականգնվել էին ներքին գործերի ծառայությունում: Պատկերացնելը դժվար չէ, թե ինչպես կարող էին տրամադրված լինել այդ անարդարորեն տուժածները, նրանց նկատմամբ, որոնցից վերագրավեցին իրենցից խլված աշխատատեղերը:

Երկրորդ աշխարհամարտում հերոսացած, հայ ժողովրդի անունը պանծացրած, դաժան կոիվներում ոտքը կամ ձեռքը կորցրած եւ իր նկատմամբ վերաբերմունք հայցող մարդուն լկտիաբար ասվում էր «Ո՞վ էր քեզ խնդրում գնալ կռվել»: Նաեւ ասվում էր «դա մեր կռիվը չէր»:

Ղարաբաղյան կռիվը հո մերն էր:

Մի խումբ մտավորականների եւ լրագրողների հետ ես նստած էի դատարանի դահլիճում եւ հետեւում էի երեք տասնյակից ավելի ազատամարտիկների դատավարությանը, որոնք մեղադրվում էին պետական հեղաշրջում կատարելու մեջ: Լսում էինք, թե ինչպես նրանք ժողովրդի այդ ընտիր զավակները, տարուց ավելի, բանտախցերում ամենայն սարսռացումների, ծեծուկտանքների են

կարող է կատարյալ գործել: Օրենքի տառի համաձայն, ծանոթ բազմադամ մի ընտանիքի դպրոցական որդին, իր նման մի երկուսի հետ, մտածել էր խաղցած ընտանիքին օգնած լինել, կաբելի գողության մեջ բռնվել եւ դատվելու էր: Բազմանդամ ընտանիքը հարկադրված եղավ, ժամանակին բազմամյա աշխատանքի ընթացքում գործարանից ստացած չորս սենյականոց հարմարավետ բնակարանը վաճառել, կծկվել մի նեղուքում եւ այդ գնով անչափահաս որդուն փրկել կորուստից, դուրս կորզել «օրինապահների» ճիրաններից:

Այնպիսի մի ժողովուրդ, որպիսին մերն է, անկարելի է, որ իր մեջ ունենար այսքան հանցագործ, այսքան գող, մարդասպան ու կողոպտիչ: Հարյուրավորները, գուցե եւ հազարավորներն են բռնվել հենց միայն կաբելի գողության մեջ: Ով չի կարողացել գողանալ, սպանել եւ կողոպտել, ընտանիքն առել, հեռացել է «երկրից»: Քչերը չէ, որ ընտանիքը լքել, գլուխներն առել փախել են ընտանիքի ուժից վեր բեռից: Իսկ քանի քանիսն են նեսվել Հրազդանի կամրջից: Այն օրն էլ, երբ բոլորս ռադիոընդունիչներին եւ հեռուստաէկրաններին կպել ականջներս պահած հետեւում էինք Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ժամը մեկ հրապարակած տվյալներին իմանալու, թե նախնական արդյունքներով թեկնածուներից ով ինչքան ձայն է ստացել, հեռուստատեսությամբ գուժեցին առավել զարհուրելին երիտասարդ, առողջ մի տղամարդ Հանրապետության հրապարակում ինքնահրկիզման փորձ է արել, նույն ընտանիքը կերակրելու անկարողությունից, եւ ծանր վիճակում տեղափոխվել է հիվանդանոց: Արարք, որ մտրակելու պես բան էր մեզ բոլորիս յուրաքանչյուրիս, նաեւ Ձեզ, պարոն նախագահ, մեր ողջ հասարակությանը: Առավելապես նրանց, որոնք նախորդ օրը, ջահեր առած խելահեղ երթի էին դուրս եկել: Ո՞ւմ էին զարմացնում: Ինչո՞ւ: Նաեւ նրանց, ովքեր թատերական հրապարակում, այդ ողբերգության հետեւյալ օրը, նախագահական ընտրությունների հաղթական ավարտից հետո, հրավառության ներքո, Ձեր իսկ ներկայությամբ, ցնծում էին մինչեւ ուշ երեկո:

Այդ ցնծությունը կարելի էր հետաձգել թեկուզ վեց ամսով կամ մեկ տարով, երբ կյանքն Հանրապետությունում, ձեր գլխավորությամբ, նկատելի փոփոխություններ կրած լիներ, զգալի չափով նվազած լիներ

գործազրկությունը եւ պակասած մուրացկանությունը:

Ձեր երդման արարողությունը ծայրեծայր, արդարեւ տպավորիչ էր: Նշանակալից էր հրավիրվածների թվում ներկայությունը պաշտոնաթող նախագահի, որին մինչ պաշտոնաթողությունը երազում միայն կարելի էր տեսնել: Համաձայն սահմանված կարգի, ամեն անհրաժեշտից բացի, նրան հատկացված է նաեւ պահակախումբ: Այս մեկը փոքր-ինչ տարօրինակ է:

Հայաստանի կոմկուսի երբեմնի ղեկավար Անտոն Քոչինյանին պաշտոնաթողությունից հետո շատերս ենք փողոցում հանդիպել, կանգնել, զրուցել: Այցելում էինք նաեւ տուն: Նոր լույս տեսած գիրքս ենք ընծայագրով տարել, նվիրել, որի տպագրության գրաքննչական պատնեշը հաղթահարելուն ժամանակին օգնել էր ինձ:

Ըստ հրապարակված վիճակագրության, բնակչության գրեթե կեսը անտարբեր է, ընտրություններին չմասնակցեց: Կարծում եմ, անտարբերություն չէր, կորցրել է հույսն ու հավատը:

Մերժելով կոմունիստական վարչակարգը, «ջրից ելել, ընկել էինք մրաջուրը»: Ընտրողների 40 տոկոսը, ղեկավարվելով հայտնի իմաստությամբ, նախընտրեց «փորձած թանը»:

Ճնշող մասը հավատաց Ձեզ, հույսեր կապեց Ձեզ հետ, պետության ղեկը վստահեց Ձեզ, բայց ասել, թե երկյուղներ չունի, սխալված կլինենք: Ձեզ, իր ձայնը տվող ամեն ոք ակնդետ հետեւում է Ձեր ընթացքին, ամեն քայլին, ամեն արածին ու չարածին, պատասխանատվության զգացում կրելով իր մեջ:

Ասել, թե ծանր ժառանգություն է Ձեզ վիճակվել, ոչինչ ասած չենք լինի:

Պաշտոնաթող վարչախումբն իր հետեւից մեծ ու փոքր ականներ է թողել:

Այդ ականների վրա նստած են զգում իրենց բոլորս նրանք, ովքեր զգնվում էին պաշտոնաթող իշխանավորների ենթակայության ներքո: Ականներ են պայթում այստեղ ու այնտեղ: Ասենք քաղաքապետարանում: Ական էր, որ պայթեց մարտի 20-ին ներքին գործերի ծառայության նախկին ու ներկա աշխատողների ոտքերի տակ:

Դուք ամեն բան չեք կարող իմանալ, ամեն տեղ հասնել: Հիացնում է մեր երիտասարդ վարչապետի ցուցաբերած եռանդուն ու հաստատակամությունը, նաեւ Ձեր, ու նրա հանձնումը, որ դեկավարման ոլորտը հագեցնելով արհեստավարժներով, կհաջողվի փրկել երկիրը, ժողովրդին դուրս բերել մղձավանջից:

Արհեստավարժություն, այո, օրենքի գերակայություն, այո:

Բայց ինչ է: Արեւ այնպես, պարոն նախագահ եւ պարոն վարչապետ, որ մեզանում հաստատվի նաեւ խղճի գերակայություն, որ դուք, մեզանից ամեն մեկը, հաշի նստելիս իրար, որ կան հաղթածներ, փողոցներում վիճում են մանուկ ու ծեր մուրացկաններ, կան աշխատանքը կորցրած երիտասարդ կանայք ու տղամարդիկ ճանապարհից հեղված ու հասարակությունից դուրս մղված: Հիշենք, երբեք չմոռանանք նրան, ով հանրապետության հրապարակում, նախագահական ընտրությունների թեժ մի օր, ինքնահրկիզումով «ասոր» խարազեց մեր ճակատին եւ մտածենք, որ գուցե այս իսկ պահին նրա վիճակում մեկ ուրիշը պատրաստվում է նույնն անել:

ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

Ռուս-թուրքական առճակատում նավթային ծրագրի շուրջ

Օրերս, Կիպրոսի մայրաքաղաքի եւ տեղեկատվության գրասենյակը, հենվելով թուրքական «Միլլիյեթ» օրաթերթի վրա, կարծիք էր հայտնել, թե «Թուրքիան ու Ռուսաստանը պատրաստվում են մեծ առճակատման գնալ նեղուցների հարցով»: «Ազգը» մայիսի 7-ի համարում «Թուրքիա-Ռուսաստան առճակատումը Լոնդոնում» խորագրով արձագանքեց գրասենյակի կարծիքին: Կրկնությունից խուսափելու համար պարզապես նշենք, որ այդ առճակատման խնդրո առարկան ոչ թե նեղուցներն են, այլ Բոսֆորով եւ Դարդանելով նավթային երթեւեկությունը սահմանափակելու թուրքական միտումները եւ Ռուսաստանի հակազդեցությունն այդ միտումին:

Ռուս-թուրքական առճակատումը նոր երեւույթ չէ: Դա անմիջականորեն պայմանավորված է Կասպից ծովի նավթային պաշարների եւ դրանց արտաքին աշխարհ դուրսբերման խնդիրների հետ: Առավել եւս նոր չէ կասպյան նավթի նկատմամբ Թուրքիայի հետաքրքրությունը: Դեռեւս 1993 թ. մարտին Անկարային հաջողվել էր սանալ ադրբեջանական նավթը Թուրքիայի տարածքով միջազգային շուկաներ դուրս բերելու շուրջ Բաքվի համաձայնությունը, եւ օրակարգ էր մտել Բաքու-Ջեյհան նավթամուղի հարցը:

Մոսկվան Բաքու-Ջեյհան նավթամուղի ծրագիրը գնահատել էր որպես ճնշման միջոց եւ դրան էր հակադրել Բաքու-Նովոռոսիյսկ տարբերակը: Այս պայմաններում վերոհիշյալ առճակատումը ինքնաբերաբար ուրվեց եւ կասպյան նավթի շուրջ ծավալվող մրցապայքարը, «Հյուրհյեթի» դիպուկ արտահայտությամբ, 1994 թ. սկզբներին վեր էր աճել «նավթամուղերի պատերազմի»: Հատկանշական է, որ յուրաքանչյուր այս պատերազմում երկուսքեմ գործի էին դրվել ազդեցության լծակները, որոնց օգտագործման արդյունավետությունն էլ դարձել էր հաղթանակի գրավական:

Ազդեցության լծակների առումով Թուրքիայի հնարավորությունները Ռուսաստանի համեմատ գերակայելի էին թվում: Սա պատահական չէր: Եթե անգամ Մոսկվային հաջողվեր նավթամթերքը կուսակել Նովոռոսիյսկում, ապա միջազգային շուկաներ դուրս բերելու համար անհրաժեշտ էր փոխադրել Միջերկրական ծով: Քանի որ Նովոռոսիյսկ-Միջերկրական ուղին Բոսֆորով եւ Դարդանելով էր անցնում, ուստի եւ առանձնակի կարեւորվեց թուրքական նեղուցներում նավագնացության հարցը:

Նավթային ծրագրի Բաքու-Նովոռոսիյսկ տարբերակով օգտագործումը հնարավոր էր դարձնում Թուրքիայի շրջանցումը, բայց ոչ թուրքական ջրային տարածքի: Ահա թե ինչու Անկարան վերանայեց նեղուցներով նավագնացության կանոնակարգը: Համապատասխանաբար սահմանափակվեց նավթատարների նավագնացությունը: 1994 թ. հունվարին նավագնացության նոր կանոնակարգը պաշտոնապես հրապարակվեց եւ մտավ ուժի մեջ: Նույն թվի փետրվարին Անկարա ժամանեց ռուսական փորձագետների պատվիրակությունը:

Անկարան նոր կանոնակարգով ազդանշան էր տալիս Մոսկվային, թե նավթային ծրագրի իրագործման այլ տարբերակ, քան Բաքու-Ջեյհան նավթամուղն է, գոյություն ունենալ չի կարող: Նեղուցները տվյալ պարագայում դառնում էին ազդեցության լծակ եւ նավարկության սահմանափակումներով փորձ էր արվում փաստի առջեւ կանգնեցնել Մոսկվային, որպեսզի նա հրաժարվի Բաքու-Նովոռոսիյսկ տարբերակից: Անկարայի ակնկալիքները, սակայն, չարդարացան: Երբ ռուսական եւ թուրքական պատվիրակությունները բուռն քննարկում էին նավագնացության նոր կանոնակարգը, ասպարեզ իջավ ՊԿԿ-ն: Թուրքիայի հարավ-արեւելքում ՊԿԿ-ականները պայթեցրին Մոսուլ-Յումուրթալըք նավթամուղը, նախազգուշացնելու համար Անկարային, թե «քանի դեռ գոյություն ունի քրդական հարց, բացառվում է կասպյան նավթի տարանցիկ փոխադրումը Թուրքիայի արեւելյան շրջաններով»:

Բաքու-Ջեյհան նավթամուղի կառուցման պայմանավորումը քրդական հարցով տիաճ անակնկալ էր Անկարային: Այս պայմաններում վերջինս այլ ելք չգտավ, քան նավթային ծրագրի շուրջ համագործակցելու առաջարկով դիմել Մոսկվային: 1995 թ. հոկտեմբերին Ռուսաստանի արտգործնախարարությունը մերժեց այդ առաջարկը, ընդգծելով, որ համագործակցության հողի տակ թաքնված է Կասպից ծովի նավթային պաշարները միանձնյա վերահսկելու Անկարայի միտումը: Միաժամանակ առաջադրվեց նավթային ծրագրի իրագործման նոր տարբերակ կասպյան նավթը Նովոռոսիյսկից առաքել Բուրգաս, որպեսզի Հունաստանի տարածքով դուրս բերվի էգեյան ծով:

Նովոռոսիյսկ-Բուրգաս-էգեյան ծով տարբերակի հակադրումը Բաքու-Ջեյհան տարբերակին նպաստեցնի հասցրեց թուրքական նեղուցները Ռուսաստանի դեմ որպես ճնշման միջոց օգտագործելու արդյունավետությունը: Անկարան հետքայլ անգամ տեղի տվեց: Դարաբաղյան հիմնահարցում Մոսկվայի գերակա դիրքը, որ ձեռք էր բերվել 1994 թ. մայիսի 12-ի հրադադարի պայմանագրով, համալրվեց նավթի խնդրում նոր գերակայությամբ: Սահմանափակվեցին Բաքու-Ջեյհան նավթամուղի համար պայքարի Անկարայի հնարավորությունները, սակայն սահմանափակումը դեռ վերջնական տպառում չէր նշանակում: Այս պայմաններում Թուրքիայի համար խիստ կարեւորվեց Եվրոպայում սովորական տպառազինությունների կրճատման պայմանագրի նշանակությունը: 1995 թ. նոյեմբերին, ըստ նախնական պայմանավորվածության, լրանում էր պայմանագրից բխող պարտավորությունների կատարման ժամկետը: Սակայն Ռուսաստանը Անդրկովկասում հավելյալ ռազմական ուժեր տեղակայելու առաջադրանքով ՆԱՏՕ-ի անդամ երկրներից նախ պահանջեց մինչեւ 1996 թ. մայիսը երկարաձգել պարտավորությունների կատարման ժամկետը, ապա սկսեց առարկել դրա բովանդակությանը: Անկարան դա իրավամբ պայմանավորեց պայմանագիրը վերանայելու եւ Անդրկովկասում իր երբեմնի գերիշխանությունը վերականգնելու Մոսկվայի ձգտումներով, որոնք, նրա կարծիքով, լրջորեն վտանգում էին ոչ միայն Բաքու-Ջեյհան նավթամուղի ծրագիրը, այլեւ Թուրքիայի փոխհարաբերությունները թուրքալեզու հանրապետությունների հետ:

Ի դեպ, վերոհիշյալ պայմանագրի վերանայումը Թուրքիան մերժում էր որպես Բաքու-Ջեյհան նավթամուղի ծրագրի սպառնալիք, իսկ Ռուսաստանն իր հայրը արդարացնում էր Անդրկովկասում թեժ կետերի առկայությամբ: Այս մոտեցումները, իրարամերժ լինելով հանդերձ, նաեւ լրացնում էին միմյանց: Եթե Թուրքիան պայմանագիրը կասեցնելու միտումով դա ակամա կաղակցում էր նավթային ծրագրին, ապա Ռուսաստանը, հակադրվելով նրա մոտեցմանը, թեժ կետերի պատճառաբանությամբ համաձայնում էր այդ կապակցությունը: Այլ կերպ ասած, ստեղծվում է յուրաքանչյուր հարցի օրակարգերն են դառնում Եվրոպայում սովորական տպառազինությունների կրճատման պայմանագրի, կասպյան նավթի խնդիրներն ու թեժ կետերը:

Ինչպիսին էլ լինի այս խնդիրների բնույթը, դրանք ընդամենը ռուս-թուրքական հակասությունների դրսեւորման ձեւեր են: Իսկ այդ հակասությունների պատճառը Անդրկովկասում ազդեցության համար ծավալվող պայքարն է: Դրսեւորման ձեւերի յուրաքանչյուր փոփոխություն հանգեցրել է այդ պայքարում ազդեցության նոր լծակների ներգրավման, հետեւաբար պայքարը յուրաքանչյուր փոփոխությունից հետո դարձել է ավելի ընդգրկուն: Հետագա ընթացքը ավելի սուր բնույթ է կրել: Հենց այդ պայքարում էլ, որպես լարվածության գլխավոր աղբյուր Անդրկովկասում, կարեւորվել է դարաբաղյան հիմնահարցի տեղն ու դերը, ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Թուրքիայի քաղաքական ծրագրերում:

ՀՄԿՈԲ ՉԱԲԲՅԱՆ



Համառոտ

Կյանքի միջին տեւողությունը 2025 թ. 73 տարի

ԺՆԵՎ, 12 ՄԱՅԻՍ, ԱՐՍԵՆ ՊՈՊԵՍ. Առ 20[illegible] թվականը կյանքի միջին տեւողությունը կաճի 66-ից հասնելով 73 տարվա: Վաղաժամ մահերի թիվը (մինչեւ 5 տարեկան տարիքը) կրկնակի կկրճատվի: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, այս կանխատեսումները բովանդակում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության զեկուցագիրը, որը երեկ ժնեւում հրապարակվել է Առողջապահության 51-րդ ամենամյա աշխարհաժողովի բացման առթիվ: Ներկայումս հիմնական «մարդասպաններն են» տարափոխիկ հիվանդությունները ու մպկաբույծների հարուցածախտերը, նշվում է փաստաթղթերում: 1997 թվականին մահացած 52,2 միլիոնից 17,3 միլիոնը մահացել էին դրանցից, 15,3 միլիոնի մահը կապված էր սիրտ-անոթային հիվանդությունների հետ, 6,3 միլիոն մարդ մահացել էր քաղցկեղից, 2,9 միլիոնը՝ շնչառական օրգանների հիվանդություններից: Մինչեւ 2025 թվականը արդյունաբերապես զարգացած երկրներում մահվան հիմնական պատճառները կլինեն սրտի հիվանդությունները, ինսուլտները եւ քաղցկեղը: Քաղցկեղի որոշ տեսակներից մահացությունը կավելանա: Քառորդ դար անց 26 երկրներում կյանքի միջին տեւողությունը կանցնի 80 տարուց: Կանխատեսումների համաձայն, այն ամենից բարձր կլինի Իսլանդիայում, Իսպանիայում, Ճապոնիայում եւ Շվեդիայում՝ 82 տարի: Չինաստանում կկազմի 75 տարի, Ռուսաստանում՝ 72, Հնդկաստանում՝ 71, Գվինեա Բիսաուում՝ 56, Սիերա Լեոնեում՝ 51 տարի: Մոլորակի բնակչությունը կաճի՝ 5,8 միլիարդից հասնելով մինչեւ 8 միլիարդ մարդու: Մոտ 59 տոկոսը կապրի քաղաքներում: Փորձագետները կանխատեսում են տարեց մարդկանց թվի էական աճ (88 տոկոսով), աշխատունակ տարիքի մարդկանց թիվը համեմատաբար կկրճատվի: Այդ առնչությամբ շատ երկրներ արդեն կենսաթոշակային ապահովման եւ բժշկական ապահովագրության նոր ծեւեր են որոնում:

Կամ բիզնես, կամ քաղաքականություն

ԹԲԻԼԻՍԻ, 12 ՄԱՅԻՍ, ԱՐՍԵՆ ՊՈՊԵՍ-ՓՐԱՅՍ ՆՅՈՒՍ. Վրաստանի պետնախարար Նիկո Լեկիբվիլին «Կոկա-Կոլա» ընկերության հաշվից ետ է վերցրել իր բաժինը, որը կազմում է 300 հազար դոլար, փողերը ձեւակերպել է իր անունով եւ դրանք տեղավորել բանկերից մեկում, հաղորդում է «Դիլիս գազետի» թերթը: Պետնախարարը, ասվում է հաղորդման մեջ, այդ որոշումն ընդունել է, երբ կառավարության վերջին ընդլայնված նիստերից մեկում Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն միանշանակ հայտարարել էր. «Ընտրեցեք, կամ մնում եք բիզնեսում, կամ խորհրդարանում եւ կառավարության մեջ»: «Ես վերջնական ընտրություն կատարեցի եւ մնում եմ կառավարությունում, կզբաղվեմ քաղաքականությամբ», ասել է Լեկիբվիլին:

Լեհաստանը ձգում է եվրոպացի հողատերերին

Արեւմտյան Եվրոպայի երկրներում հողի չափազանց բարձր գների, Եվրամիության սահմանած քվոտաների եւ արտադրության նորմաների պատճառով եվրոպացի հարուստ հողատերեր սկսել են համեմատաբար էժան կալվածքներ ձեռք բերել Արեւելյան եւ Կենտրոնական Եվրոպայի երկրներում: Ներկայումս արեւմտաեվրոպացի 200-ից ավելի հողատերեր միայն Լեհաստանում 100 հազար հա-ից ավելի հողատարածքներ են վարձակալել: Այդ երկրի հողը բերրի է, աշխատուժը համեմատաբար էժան, ուստի հնարավոր է այնտեղ փոքր ծախսերով ձեռք բերել խոշոր կալվածքներ: Լեհաստանը նախկին կոմունիստական բլոկի այն երկրներից է, որտեղ հողերը երբեւէ զանգվածաբար չեն կոլեկտիվացվել: Չնայած դրան, 2 մլն հա հողատարածքներ, այնուամենայնիվ, վերածվել էին պետական տնտեսությունների: 1989 թ. Լեհաստանում կոմունիստական վարչակարգի անկումից հետո այդ հողատարածքները մնացին անմշակ, իսկ դրանց բազմահազար գյուղատնտեսական բանվորները համալրեցին գործազուրկների շարքերը: Այսօր պետությունն այդ հողերը վարձակալության է տալիս:

Դեպի Արեւելք արեւմտաեվրոպացիների շարժումը սկսվեց գրեթե 5 տարի առաջ: Գերմանիայում, Հոլանդիայում եւ Դանիայում մասնագիտացված հատուկ գործակալություններն այսօր Լեհաստանում եւ Արեւելյան ու Կենտրոնական Եվրոպայի մյուս երկրներում ազատ հողատարածքներ են փնտրում իրենց հաճախորդների համար: Որոշ հաջողակ հաճախորդների հաջողվում է հրապալի կալվածքներ, պալատներ, այգիներ ու շտարվաններ ձեռք բերել, որոնց նախկին տերերը մեծ մասամբ եղել են գերմանացի ազնվականներ:

Արեւելյան Եվրոպա տեղափոխված նոր կալվածատերերի կյանքը միշտ չէ, որ դյուրին է: Այսպես, նրանցից մեկը բրիտանացի Ռիչարդ Ֆիլիպսը, Լեհաստանում, Գերմանիայի սահմանի մոտակայքում ձեռք բերած 1200 հեկտարանոց հողատարածքում վերջին 1,5 տարում մոտ 700 հազար դոլարի ներդրումներ է կատարել: 1996 թ. հունիսին, երբ նա 15 տարով վարձակալեց իր կալվածքը, այնտեղ կային լոկ մեկ տասնյակ ժանգոտ գյուղատնտեսական մեքենաներ: Հողերի զգալի մասը չէր հերկվել դրան նախորդած 10 տարիների ընթացքում: Այսօր էլ շինությունների մի մասը չի օգտագործվում, զուրկ է դռներից եւ պատուհանների ապակիներից: Գործազրկության նպաստ ստացող լեհ գյուղատնտեսական բանվորներն այդ շինություններից հանել տարել էին այն ամենը, ինչը հնարավոր է վաճառել: Նույնիսկ վառելափայտ չէր մնացել: Ռիչարդ Ֆիլիպսը Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից եւ Հոլանդիայից բերել տվեց գյուղատնտեսական նոր մեքենաներ: Ներկայումս նրա կալվածքը դարձել է շահութաբեր: Նախկին պետական տնտեսության 120 բանվորների փոխարեն այժմ այնտեղ աշխատում է 7 մարդ: Արտադրանքն իրացվում է Լեհաստանի հսկայական շուկայում եւ մոտ ժամանակներս կարող է նույնիսկ առավել բերելի:

Արեւելյան Եվրոպայի երկրներ առաջինը մուտք գործեցին գերմանացի եւ հոլանդացի հողագործները: Նրանց հաջորդեցին բրիտանացիները: Ինչպես տեղեկացնում է «Էքսպրես» հանդեսը, այս տարվա փետրվարին Լոնդոնում 200-ից ավելի մարդ է մասնակցել այն սեմինարին, որը նվիրված էր Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրների հողագործական բարենպաստ պայմաններին: Արեւելյան Եվրոպայում անգլիացի հողագործների համար կալվածքներ փնտրող լոնդոնյան ընկերություններից մեկի խորհրդատու Քեյթ Լեդինգտոն-Հիլը պնդում է՝ 50 ակր՝ նոր Զելանդիայից եւ 70 ակր՝ Կանադայից հետո Արեւելյան Եվրոպան դարձել է բրիտանացի ագարակատերերի վերջին նոր սահմանը»:

Ֆիրմայի հաճախորդները մեծ մասամբ հացահատիկ աճեցնողներ են, որոնք խոշոր հողահանդակներ են փնտրում: Նրանք հետաքրքրվում են գլխավորապես Լեհաստանի, Հունգարիայի եւ Չեխիայի հողերով: Լեդինգտոն-Հիլը պարզաբանում է, այդ երկրներում նրանք [illegible] վարձակալել: Արեւմտյան Եվրոպան համեմատաբար տասնամյակներ էին [illegible]: Չնայած կատարվող խոշոր ներդրումներին, արեւելաեվրոպական հողերի մակարդակը 1-2 տարի դառնում է եկամտաբեր:

Արեւելաեվրոպական երկրների բարգավաճման անդամ դարձնելուց հետո նոր կալվածատերերի եկամուտները էլ ավելի կաճեն, չնայած բահանձնաժողովի որոշ պատգամավորների այն մտադրություններին, թե ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականությունը եւ վերակազմակերպումները դեռ երկար ժամանակ չեն տարածվի այդ երկրների վրա:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Այսիս է. Կրկին եռում է Եղեմնամայր Երեւանի մշակութային կյանքը: Եվ Երեւանի հաղարամեակի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի գեղատեսիլ շամուտի առջեւ արդեն ոտքերդ ներկայացումը սկսվելուց հետո, տակավին բազմություն է կանգնած «ավելորդ տոմս» հայթայթելու ցանկությամբ: Թատրոն, առանց որի արդեն 30 տարի անհնար է դատկերացնել մեր մշակութային կյանքը: Երեկվա օրը նույնպես բացառություն չէր: Բացվել էր վարագույրը եւ բեմում... Բեմում բոլոր ժամանակների համար իր իմաստում կանխակալությամբ փոքրկում, սիրում, տառապում էր... Պարույր Սեւակը:

Իսկապես, մի անվերջ վերադարձ դեպի ճշմարիտն ու ոգեղենը, դեպի արդարամտությունը եւ հոգու ուժը, դեպի ազգային եւ մարդկային բարձր արժեքները: Ի դեմս բոլոր ժամանակների բոլոր տիպի բռնակալների եւ ինքնասիրահարված աբոռաղաբների:

126-րդ անգամ «Անվերջ վերադարձ» ներկայացումով մեզ հյուր էր եկել մեր հաղարացին եւ բանաստեղծը, իր դայծառ եւ տխուր, փխրուն եւ զորեղ էության առկայծումները դահլիճին հրամցնելով հանրահայտորեն ճանաչված արտիստի ստի տրտիյունի եւ ազդեցիկորեն արտահայտիչ խոսքի տարերքով: Բեմում ՀՀ վաստակավոր արտիստ Արքուր Ութմազյանն էր, որի ծննդյան 50-ամյակն էր նշում Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկականը:

Անուն, որ իր անդրանիկ ստեղծագործական տարիներից բեւեռեց իր վրա լայն հանդիսատեսի, եւ հատկապես իր սերնդակիցների ուշադրությունը: 70-ականների մշակութային, բուհական, երիտասարդական մեր եռուն կյանքի անդաստանում արագընթաց եւ ակնբախ վերելք էր ապրում մի նոր անուն: Այդ անունը Արքուր Ութմազյան էր: Ասմունքում էր «Ուսանողական գարունների», բազմապիսի փառատոների, մինչ բուհական մրցույթների շրջեր մի բույլում, որում նորափայլ աստղի պես գրավիչ էր նրա խոսքն ու կեցվածքը: Արքուրն ինչ էլ ասմունքեր Նարեկացի, Չարենց, Պ. Սեւակ, Ռ. Սեւակ, Հ. Սահյան, Վ. Դալբյան, Ս. Կաղատիկյան, Գ. Էմին, Ս. Եսենին, Ե. Եվտուշենկո, Ա. Վոզնեսենսկի, թե այլ... իր տարեկիցների մասին էր, իր սերնդակիցների հոգուց եւ ուրից բխող: Նրա կարդալու ոճը ժամանակ էր ինքնաճույճ (բառիս լավագույն իմաստով), սակայն եւ խորը: Նրանց գաց: միշտ գերող ինտելեկտուալ մտայնազգացությամբ: Խոսքի եւ բեմական կեցվածքի բացառիկ կուլտուրայով համակված: Շնորհներ, որոնց մեծ մասը, Արքուրը, հիրավի, ժառանգել է իր մորից հայտնի դերասանուհի-ասմունքող, ՀՀ ժողովրդական արտիստուհի Հրաչուհի Ջինանյանից:

Երեկ, նայելով լեփ-լեցուն դահլիճին, մտաբերեցի, որ միշտ, երբ ազդագրերում նշված էր Արքուր Ութմազյանի անունը, անբացակա ապահովված էր: Եվ միշտ, ինչպես եւ երեկ իր հոբելյանական ներկայացմանը, նրա մենաելույթներին դժվար էր տոմս ճարելը: Ուրի՞ շ բան էր բերում իր հետ բեմ Արքուրը: Իր ժամանակի եւ իր սերունդի բազում դայծառ ու լուսավոր իդեալների կերդարանավորողը:

«Երախտապարտ եմ իմ թատրոնին, իմ հանդիսատեսին»

Նշվեցին ՀՀ վաստակավոր արտիստ Արքուր Ութմազյանի ստեղծագործական 30 եւ ծննդյան 50-ամյակները



դեպի ազգային եւ մարդկային բարձր արժեքները: Ի դեմս բոլոր ժամանակների բոլոր տիպի բռնակալների եւ ինքնասիրահարված աբոռաղաբների:

126-րդ անգամ «Անվերջ վերադարձ» ներկայացումով մեզ հյուր էր եկել մեր հաղարացին եւ բանաստեղծը, իր դայծառ եւ տխուր, փխրուն եւ զորեղ էության առկայծումները դահլիճին հրամցնելով հանրահայտորեն ճանաչված արտիստի ստի տրտիյունի եւ ազդեցիկորեն արտահայտիչ խոսքի տարերքով: Բեմում ՀՀ վաստակավոր արտիստ Արքուր Ութմազյանն էր, որի ծննդյան 50-ամյակն էր նշում Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկականը:

Անուն, որ իր անդրանիկ ստեղծագործական տարիներից բեւեռեց իր վրա լայն հանդիսատեսի, եւ հատկապես իր սերնդակիցների ուշադրությունը: 70-ականների մշակութային, բուհական, երիտասարդական մեր եռուն կյանքի անդաստանում արագընթաց եւ ակնբախ վերելք էր ապրում մի նոր անուն: Այդ անունը Արքուր Ութմազյան էր: Ասմունքում էր «Ուսանողական գարունների», բազմապիսի փառատոների, մինչ բուհական մրցույթների շրջեր մի բույլում, որում նորափայլ աստղի պես գրավիչ էր նրա խոսքն ու կեցվածքը: Արքուրն ինչ էլ ասմունքեր Նարեկացի, Չարենց, Պ. Սեւակ, Ռ. Սեւակ, Հ. Սահյան, Վ. Դալբյան, Ս. Կաղատիկյան, Գ. Էմին, Ս. Եսենին, Ե. Եվտուշենկո, Ա. Վոզնեսենսկի, թե այլ... իր տարեկիցների մասին էր, իր սերնդակիցների հոգուց եւ ուրից բխող: Նրա կարդալու ոճը ժամանակ էր ինքնաճույճ (բառիս լավագույն իմաստով), սակայն եւ խորը: Նրանց գաց: միշտ գերող ինտելեկտուալ մտայնազգացությամբ: Խոսքի եւ բեմական կեցվածքի բացառիկ կուլտուրայով համակված: Շնորհներ, որոնց մեծ մասը, Արքուրը, հիրավի, ժառանգել է իր մորից հայտնի դերասանուհի-ասմունքող, ՀՀ ժողովրդական արտիստուհի Հրաչուհի Ջինանյանից:

Երեկ, նայելով լեփ-լեցուն դահլիճին, մտաբերեցի, որ միշտ, երբ ազդագրերում նշված էր Արքուր Ութմազյանի անունը, անբացակա ապահովված էր: Եվ միշտ, ինչպես եւ երեկ իր հոբելյանական ներկայացմանը, նրա մենաելույթներին դժվար էր տոմս ճարելը: Ուրի՞ շ բան էր բերում իր հետ բեմ Արքուրը: Իր ժամանակի եւ իր սերունդի բազում դայծառ ու լուսավոր իդեալների կերդարանավորողը:

Եվ ահա 30 տարիների դրամատիկական արտիստի ստեղծագործական ոսկե մատյանում են գրանցված 20-ից ավելի դերեր հայ, ռուս, արեւմտաեվրոդական դրամատուրգիայի երեւելի նմուշների, դրանցից լավագույնների համար ստացած դիպլոմներ, բազում հյուրախաղեր ԽՍՀՄ-ում, ԱՄՆ-ում, Կանադայում, Բուլգարիայում, Ավստրալիայում, Ֆրանսիայում, Լիբանանում, Սիրիայում, Բուլդարիայում եւ այլուր, բարձր գնահատանքներով զեստեղված անձնական գրադահոց, իսկական արտիստի ստեղծագործական նվաճումներով լի կյանքին հարիր ջերմագին դրվատանքի խոսքեր եւ ներկայացումներից հետո երկար չլռող ծափահարություններ:

30 տարի Հայաստանի լավագույն, առաջատար բեմահարթակներից մեկում, որի գեղարվեստական ղեկավարն է տաղանդավոր ռեժիսոր Արմեն Խանդիկյանը, կերտել է Արքուր Ութմազյանն իր տասնյակ հերոսների կերդարներ, նրանց տղավորիչ, կենդանի գոյով «բնակեցրել է» իր սիրելի թատրոնի բեմական կյանքը: Արքուր Ութմազյանն այն դերասաններից է, որ օժտված է յուրաքանչյուր դերի իմաստային-գեղարվեստական խորքը թափանցելու շնորհով, կերդարը դրամատուրգիական կուռ կառուցվածքով կերտելու ձիրքով: «Արքուր Ութմազյանը չափազանց հետաքրքիր արտիստ է, ասում է Արմեն Խանդիկյանը, հատկապես այն առումով, որ բազմակողմանի է»:

«Ես հոգու խոր երախտիքով եմ միշտ հիշում իմ սիրելի թատրոնի հիմնադրին: Հրաչյա Ղափլանյանին, ասում է Արքուրը, խանգի չլիներ նա, ես չէի դառնա դերասան: Եվ այսօր, երբ ինձ բազում շնորհավորանքներ են ուղղվում, ես իմ մարդկային եւ արտիստական դարտքն եմ համարում մեծ շնորհակալական խոսք ասել մեր թատրոնին, նրա ողջ անզուգական կոլեկտիվին: Շնորհակալություն այն ամենի համար, ինչ թատրոնը արել է ինձ համար իր դերասանի, շնորհակալություն նրա համար, որ ահա 30 տարի անընդմեջ, բոլոր դժվարություններին ի հեռուկս, այս թատրոնը մշտապես եղել է բարձր մշակութային ու գեղարվեստական արժեքներով աղրող թատրոն: Շնորհակալություն այդ ամենի համար նրա ղեկավարին Արմեն Խանդիկյանին եւ բոլոր իմ խաղընկերներին:

Սակայն չեմ կարող մոռանալ նաեւ իմ հանդիսատեսին: Ես այժմ ձեր թերթի միջոցով դիմում եմ բոլոր նրանց, ովքեր ահա 30 տարի խլում են ինձ հետ... Իմ հանդիսականը... Նա, որ տեսել է ինձ ամենատարբեր ներկայացումներում, նա, ով եկել եւ գալիս է թատրոն թե իմ խաղընկերների, թե հատուկ ինձ համար... Նա, ով հուզվում է ինձ հետ դահլիճում նստած, ով ժպտում է ու արտասվում, ով թատրոնի շեմին ոտք դնելուց առաջ ընտրում է ինձ համար, իր սիրած արտիստի, աշխարհի ամենագեղեցիկ ծաղիկները: Ես բեմում տեսնում, զգում եմ իմ հանդիսատեսին եւ խաղի ամենաերջանիկ դահերին մենք ես եւ նա, ասես դարուցված լինենք մի ընդհանուր լուսապտակ մեջ: Նա՝ «նստած» ես իմ հանդիսատեսին, իմ հանդիսատեսը «կերտում է» ինձ, եւ մենք միասին ենք գնում դեպի ներկայացման գագաթնակետը, որը, Արվեստի անմակ տելի օրենքով, կոչված է ի վերջո, սերմանել մարդկանց հոգիներում Լույսն ու Բարին: Հանդիսատեսի հետ ներդաշնակվելու այս զգացողությունը մեծագույն երջանկություն է արտիստի համար եւ այդ երջանկության համար ես շնորհակալ եմ իմ հանդիսատեսին:

Ուշ երեկո էր, սակայն դեռ երկար չէին լռում ծափհոդությունները, շնորհակալության եւ դրվատանքի խոսքերը ժողովրդի կողմից սիրված արտիստին: Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի հյուրընկալ տանիքի ներքո հանդիսականների թվում հավաքվել էին նաեւ մշակույթի, թատերական ասպարեզի բազում գործիչներ, կառավարության ներկայացուցիչներ: Մեկը մյուսի հետեւից ներկայացումից հետո բեմ էին բարձրանում նրանք իրենց արտի խոսքը մատուցելու արտիստին: Դրանց թվում էին շնորհավորանքներ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի անունից, որն ընթերցեց Առուշան Հակոբյանը, անձամբ շնորհավորեցին արտիստին մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության թատերական վարչության պետ Վրեժ Հակոբյանը, Սունդուկյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Վահե Շահվերդյանը, Երեւանի պետական կամերային թատրոնի գեղարվեստական ղեկավար Արա Երնջակյանը, Հայաստանի թատերական գործիչների նախագահ Երվանդ Ղազանչյանը:

Հոբելյանական ներկայացմանը ներկա էր Ազգային Ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանը: Ոգեւորված հանդիսատեսը հոսանքայս երկար ծափահարություններով ողջունում էր իր սիրած արտիստին, նոր գեղեցիկ հանդիպման ակնկալի՝ով:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԻՇԱՏԱԿԻ ՅՈՒՐՔ

Խաչքար-հուշարձան՝ զոհված նորագավիթցիների հիշատակին

Մայիսը հայ ազգի համար նշանավորվել է հաղթանակներով: Սկսած հինգդարյա Ավարայրից մինչեւ մերօրյա Շուշի: Այս ընթացքում զոհվել է հայոց սերունդ՝ նվիրյալներ, որոնց հիշատակը եւ անունը հարգելով է, որ ճանապարհ է հարթվում նորօրյա մարտիկների համար: Նրանք են, որ սերելով ավագներից ու զգալով զոհվածների հանդեպ տածվող հարգանք ու երախտագիտություն, գոտեմարտվում են:

Այսօրինակ խնկարկման եւ հիշատակի հավերժացման միջոցառում տեղի ունեցավ մայրաքաղաքի Շենգավիթ համայնքի մշակույթի տան բակում: Բացվեց մի նոր ուխտատեղի, տեղադրվեց խաչքար-հուշարձան ի նշան եւ ի հիշատակ երկրորդ աշխարհամարտում եւ արցախահայության գոյամարտում զոհված ազատամարտիկների: Նախաձեռնողներն էին մշակույթի տան տնօրեն Գառնիկ Շիրինյանը եւ Արմեն Կարապետյանը: Քանդակի վարպետ-հեղինակներն են հայր եւ որդի Գարիկ եւ Հայկ Շիրինյանները:

Խնկարկման եւ երախտագիտության նմանօրինակ միջոցառմանը, որին ներկա էին Մեծ հայրենականի եւ դարաբաղյան պատերազմի մասնակից-նվիրյալները, խոսք ասացին Շենգավիթի քաղաքապետ Բագրատ Անդրեասյանը, մարզադպրոցի տնօրեն, ավագանու անդամ Իշխան Մանուկյանը եւ գրող Էդուարդ Ավագյանը: Ելույթ ունեցան նաեւ համայնքի թիվ 140 դպրոցի եւ 113 մանկապարտեզի սաները: Իսկ փոքրիկները, Վահեն, Վարդանը եւ Տաքեւիկը եռաբլուրից, Հաղթանակ զբոսայգու անհայտ զինվորի գերեզմանից եւ Նորագավիթի փոքրիկ «եռաբլուրից» բերված հողը շաղ տվեցին խաչքար-հուշարձանի առաջ: Եվ միավորվեցին նվիրյալ-զինվորներն այս խաչի ներքո, եւ իրենց միահամուռ ուժն ու կամքն ուղղեցին առ բնամին, եւ մեկընդմիշտ հաստատեցին, որ կա հայը, կա հայոց հողը, հողհայրենին, իսկ հետաքրքրաշարժն այն էր, որ խաչքար-հուշարձանի բացման պատիվը տրվեց Մեծ հայրենականում եւ դարաբաղյան կռվում զոհվածների հարազատներին:

ՍԻՄՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՍՏՂԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Լեւոն Չալուկյանը՝ միջազգային կինոարդյունաբերության երեւելի դեմքերից



Նրա հաջողությունը հետաքրքրությամբ կարող է ֆիլմի սյուժե դառնալ: Հենց այն ֆիլմերից մեկի, որոնք նրա ընկերությունն օգնում է վերջնական տեսքի բերել: 70-ամյա Լեւոն Չալուկյանին միջազգային կինոարդյունաբերությունը ճանաչում է որպես բազմաթիվ Օսկարներ ու էմմիներ ստացած Ռիդեր Սաունդ Սերվիսի տնօրեն: Ընկերությունը, որը կրում է իր հիմնադրի Չալուկյանի նախկին վերադասի անունը, միայն Չալուկյանի ղեկավարության օրոք հաստատել է նվաճել տասնհինգ էմմի եւ մեկ Օսկար աղմուկ հանած «Ռոսիկրուսիզոն բոյոյս» ֆիլմի համար: Էմմիներից 9-ը անձամբ Չալուկյանն է ստացել տեխնիկական վարպետության համար:

Ռիդեր Սաունդ Սերվիսը հիմնականում կազմված է ստուդիաներից, որտեղ հնչյունավորում են ֆիլմերը: այսինքն դերասանները արդեն նկարահանված ֆիլմերին ձայնային էֆեկտներ են ավելացնում: Չալուկյանի ընկերությունը հնչյունավորել է այնքիսի ֆիլմեր, ինչպիսիք են «Կորած տարանի անդամները», Դիանեյի «Հերկուլեսը» եւ «Թեռի օդը»:

Չալուկյանի ծնողները եղեռնի ժամանակ Սեբաստիայից փախել են ԱՄՆ, որտեղ էլ նա ծնվել է: Երբ ավարտվեց երկրորդ համաշխարհային պատերազմը եւ ռազմածովային նավատորմը զգալիորեն կրճատվեց, Չալուկյանը Ռիդեր Սաունդ Սերվիսում աշխատող իր մի ազգականից իմացավ կազմակերպության մասին: 1954 թվին նա սկսեց այնտեղ աշխատել: Առաջին պատշտոնը բավականին համեստ էր: Նրա պարտականություններից էր սուրճ եւ նախաճաշ հասցնելը: 22 տարի անց նա գնեց ընկերությունը:

AIM ամսագրից
թարգմանեց Ռ. ԱՂԱՋԱՆՅԱՆԸ

ՎԱՐԿԱԾ, ԹԵ՞...

Բասկերը մեր հայրենակիցնե՞րն են..

«Բասկյան հանդիպումների» շարքի երկրորդ միջոցառումը տեղի ունեցավ արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի եւ համագործակցության հայկական ընկերությունում: Այն կազմակերպել էին Երեւանի պետական համալսարանի հայ-բասկյան «Արաֆս» միջազգային գիտական հանդեսի խմբագրությունը (խմբագիր՝ Վահան Սարգսյան) եւ «Հայաստան-Իսպանիա» ընկերությունը (դասախանատու քարտուղար՝ Նիկոլայ Անտոնյան): Շարքի երկրորդ հանդիպումը նվիրված էր Բասկյան երկրի Նավառայի շրջանի ազգագրությանը: Նավառան բասկերի նախահայրենիքն է, որ ավելի շատ է զգացվում հայկականությունը: «Արաֆս» անվանումով գեսը գտնվում է այս տարածաշրջանում, այստեղ է նաեւ Իսաբա գյուղը, որ հաստատվել են հայերը: Նավառան համարվում է հայկական կենտրոն: «Բասկյան հանդիպումներ» շարքի անցկացման նպատակն է կամուրջ գցել հայ-բասկյան մշակույթների միջեւ, լուսաբանել մինչեւ այժմ առեղծվածայինքաս հարցեր հայ-բասկյան առնչություններին նվիրված զեկուցումով հանդես եկավ երեւանի պետական համալսարանի «Արաֆս» միջազգային գիտական հանդեսի խմբագիր Վահան Սարգսյանը: Անդրադառնալով հայերի եւ բասկերի ծագումնաբանական եւ մշակութային ընդհանրություններին, զեկուցողը նշեց, որ բասկերի մոտ մինչեւ այժմ էլ գոյություն ունի կաթը չիկացած քարով տաքացնելու սովորությունը: Ոչ թե կաթսան են դնում կրակի վրա, այլ փայտե կաթսայում եղած կաթի մեջ իջեցնում են չիկացած քարը: Նման ձեւով կաթը տաքացրել են Վանի շրջանի հայ հովիվները, ովքեր արոտավայրերում լինելով՝ երկար ժամանակ կտրված են եղել բնակավայրերից: Զեկուցողը ծանուցեց նաեւ, որ բասկյան հեթանոսական օրացույցը հայկական նույն ժամանակաշրջանի օրացույցի տարատեսակն է: Վահան Սարգսյանը տեղեկացրեց, որ «Բասկյան հանդիպումներ» շարքի միջոցառումները կշարունակվեն մինչեւ տարեվերջ: Ցուցադրվեց Նավառայի մշակույթին նվիրված տեսաֆիլմ:

Ն. Ս.

Հայտարարություն

GS ընկերությունը տարեդարձի առթիվ կազմակերպում է բարեգործական ներկայացումներ տիկնիկային թատրոնի շենքում երեխաների համար մայիսի 12, 13, 14, 15-ին, ժամը 15:00-ին

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Ընտրվեց նոր նախագահ

Հանրապետական ֆեդերացիայի արտահերթ կոնֆերանսը

Երեկ տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի արտահերթ կոնֆերանսը: Սոտավորապես երկու շաբաթ առաջ ֆեդերացիայի գործադիր կոմիտեի նիստում կազմակերպության նախագահ Արմեն Սարգսյանը հրաժարական էր տվել, եւ կոնֆերանսը հիմնականում պետք է լուծեր նոր նախագահ ընտրելու հարցը:

Արմեն Սարգսյանը հանդես եկավ 1994-98 թթ. ժամանակահատվածում ֆեդերացիայի կատարած աշխատանքների հաշվետվությամբ: Նա խոսեց հանրապետության ֆուտբոլային կյանքի, միջազգային մրցումներին մեր ակումբների ու հավաքականների մասնակցության մասին: Ֆեդերացիայի նախագահը փաստորեն բաց չթողեց իրենց գործունեության ոչ մի ոլորտը: Նա նշեց, որ անցած տարիների ընթացքում հաջողություններ եղել են: Ֆեդերացիան ամրապնդել է իր ֆինանսական վիճակը, դրանով իսկ օգնել է նաեւ ակումբներին: Պրն Սարգսյանը նշեց, որ ՖԻՖԱ-ի եւ ՈՒԵՖԱ-ի հետ գործնական լավ հարաբերություններ են ստեղծված: Նա ցավով ավելացրեց, որ հանրապետության մարզական կազմակերպությունների հետ փոխհարաբերություններ չեն ստացվել: Ի պատիվ իրեն, Սարգսյանը հանդես բերեց ինքնաքննադատական մոտեցումներ: Նա ասաց, որ շատ հարցեր չի կարողացել լուծել, շատ հարցեր մնացել են կիսատ:

Խոսելով իր հրաժարականի մասին, պրն Սարգսյանը իրեն փոխարինող նախագահին հաջողություններ մաղթեց:

Ֆեդերացիայի աշխատանքներում տեղ գտած թերությունները արդարացիորեն քննադատեցին ելույթ ունեցողներից շատերը: Ալեքսան Ավետիսյանը, Սուրեն Բաղդասարյանը, Արկադի Անդրեասյանը եւ մյուսները: Նրանք նշեցին, որ հանրապետական ֆեդերացիան փակ, գաղտնի կազմակերպություն չպետք է լինի: Ֆուտբոլային հասարակայնությունը պետք է տեղյակ լինի բոլոր հարցերին, նաեւ նյութական ու ֆինանսական խնդիրներին: Բոլոր ելույթ ունեցողները մտահոգ էին հանրապետության ֆուտբոլային վաղվա խնդրով:

Կոնֆերանսի մասնակիցները քվեարկությամբ ընդունեցին Արմեն Սարգսյանի հրաժարականը:

Կոնֆերանսի օրակարգի երկրորդ կարեւոր հարցին ընտրությանն անցնելուց առաջ նախագահի երկու թեկնածուներից մեկը ճանաչված ֆուտբոլիստ, հանրապետական ֆեդերացիայի նախկին նախագահ Նիկոլայ Ղազարյանը հանեց իր թեկնածությունը եւ մասնակիցներին կոչ արեց քվեարկել մյուս թեկնածուի՝ Երեւանի խաղամարտ Սուրեն Աբրահամյանի օգտին:

Իր ծրագիր-ելույթում պրն Աբրահամյանը նշեց, որ ամբողջ կյանքում կապված է ֆուտբոլին: Երբեք չի կտրվել սիրելի մարզաձեւից: Այսօրվում մարզիչ եղած տարիներին ամենամեծ ժամանակներում, որտեղ վերջերս ղեկավարած ֆեդերացիան չի կարողացել լուծել շատ հարցեր, մեծ դերակատարություն է գտել 3-4 մարզադաշտեր կարգի բերելու, հոգացել է մարզիչների խնդիրները, զբաղվել է նաեւ հանրապետության ֆուտբոլային հարցերով, քանի որ ֆեդերացիայի գործկոմի անդամ է:

Ավելացնենք, որ առիթ ու հնարավորություն ներկայանալու դեպքում, նախկին մարզիչ, ներկայիս խաղամարտ, գեներալ Աբրահամյանը խաղադաշտ է մտնում որպես ֆուտբոլիստ:

Սուրեն Աբրահամյանը հիանալի է տեսնում անելիքները՝ ակումբներ, հավաքականներ, մարզադպրոցներ, մարզադաշտեր, ֆուտբոլի զարգացում ամբողջ հանրապետությունում: Նա զգնում է, որ ֆուտբոլի զարգացման հաղթականություն պետք է մտակվի: Նա ասաց, որ ազգովին պետք է գործի լծվենք, եւ որ ինքը, համաձայնություն տալով ֆեդերացիայի նախագահ ընտրվելու, հույս ունի, որ ֆուտբոլի հետ կապված բոլոր մարդիկ իրեն թիկունք կլինեն: Ֆեդերացիայի նախագահի թեկնածուն խոստացավ, որ ընտրվելու դեպքում ինքն իր ուժերի ներածին չափ կջանա, որ վիճակը շտկվի:

Դահլիճում հավաքվածներին շատ դուր եկավ նրա հետեւյալ արտահայտությունը «Ֆուտբոլը Հայաստանի, Երեւանի կոլորիտն է, եւ մենք պետք է պահպանենք այն»:

Սուրեն Աբրահամյանին լիովին վստահելով էլ կոնֆերանսի մասնակիցները միաձայն նրան հանրապետական ֆեդերացիայի նախագահ ընտրեցին: Մենք էլ նրան հաջողություններ մաղթենք այդ դժվարին գործում:

Ռ. Ա.

Հայաստանի առաջնությունում

Բարձրագույն խումբ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության բարձրագույն խմբի մրցաշարի առաջին շրջանի երկու հանդիպումները հետաձգվել էին: Եվ ահա «Արարատ»-«Դվին» եւ «Ղարաբաղ»-«Դվին» խաղերի ավարտով մրցաշարային աղյուսակը լրիվ տեսք ստացավ: Հանդիպումներից առաջինում գրանցվեց մարտական ոչ-ոքի 2-2: Երկրորդն ավարտվեց «Ղարաբաղի» վստահ հաղթանակով 3-0 հաշվով:

Այսօր արդեն սկսվում է առաջնության երկրորդ շրջանը: Կհանդիպեն «Շիրակ-2»-«Երեւան», «Ղարաբաղ»-«Էրեբունի-ՀՄՄ», «Արարատ»-«Ցեմենտ» զույգերը: «Դվին»-«Շիրակ» խաղը ավելի ուշ կանցկացվի:

Մրցաշարային աղյուսակ

Առաջին շրջանից հետո

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Շիրակ	8	7	1	0	20-2	22
2. Ցեմենտ	8	6	1	1	21-5	19
3. Էրեբունի	8	5	1	2	14-6	16
4. Փյունիկ	8	3	3	2	11-11	12
5. Երեւան	8	3	2	3	10-8	11
6. Արարատ	8	1	4	3	7-10	7
7. Ղարաբաղ	8	1	4	3	6-11	7
8. Դվին	8	1	1	6	6-17	4
9. Շիրակ-2	8	0	1	7	0-25	1

Ռմբարկուներ

Դ. Թամբուրա («Երեւան»)	6
Ա. Պետրոսյան («Շիրակ»)	6
Ա. Ավետիսյան (Էրեբունի-ՀՄՄ»)	5
Ա. Աղամյան («Շիրակ»)	4
Կ. Սիմոնյան («Էրեբունի-ՀՄՄ»)	4

Առաջին խումբ

Կայացան հանրապետական առաջնության առաջին խմբի մրցաշարի 6-րդ տուրի խաղերը: Մարզասերներին ենք ներկայացնում դրանց արդյունքները. «Զվարթնոց»-«Լոռի» 5-2, «Լեռնագործ»-«Ղարաբաղ-2» 1-0, «Ալաշկերտ»-ՆՀՄԱ 2-0, ՖԻՄԱ-«Նաիրիտ» 0-3, «Մուշ»-«Գինամոնտ-Երգիա» 1-0, «Սոթք»-«Քասախ» 3-1:

Մրցաշարային աղյուսակ

Մայիսի 13-ի դրությամբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Սոթք	6	5	0	1	18-5	15
2. Նաիրիտ	6	5	0	1	15-9	15
3. Զվարթնոց	5	4	1	0	15-5	13
4. Լոռի	7	4	1	2	13-9	13
5. ՆՀՄԱ	7	4	0	3	12-7	12
6. Ալաշկերտ	5	3	1	1	7-3	10
7. Մուշ	6	3	1	2	7-8	10
8. Լեռնագործ	4	2	0	2	4-7	6
9. Գինամոնտ	5	2	0	3	4-11	6
10. Քասախ	5	1	0	4	4-11	3
11. Նիգ	5	1	0	4	7-11	3
12. ՖԻՄԱ	5	0	1	4	3-12	1
13. Ղարաբ.-2	8	0	1	7	2-15	1

Այստեղ թիմերը անհավասար թվով խաղեր են անցկացրել, ինչը դժվարացնում է որոշակի եզրակացություններ անել:

Սակայն պարզ է, որ բարձրագույն խմբի ուղեգրերի համար պայքարը կընթանա Երեւանի երեք թիմերի «Նաիրիտի», «Զվարթնոցի», ՆՀՄԱ-ի, ինչպես նաեւ «Սոթքի», Վանաձորի «Լոռիի» եւ Մարտունու «Ալաշկերտի» միջեւ:

ՀԱՕԿ

Միջազգային կապերն ընդլայնվում են

Մայիսի 7-10-ը Լիտվայում էին գտնվում Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Ալեքսան Ավետիսյանը եւ գլխավոր քարտուղար Հարություն Յավրյանը: Նրանք այդ հանրապետության օլիմպիական կոմիտեի ղեկավարների հետ Վիլնյուսում կնքեցին երկկողմանի համաձայնագիր մարզական կապերը վերականգնելու վերաբերյալ: Ստորագրված փաստաթուղթը կնպաստի օլիմպիական գաղափարների տարածմանը, երկու հանրապետությունների բարեկամության ամրապնդմանը: Համաձայնագրում մեծ տեղ է տրվում փորձի փոխանակմանը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց մարզական պատվիրակությունների փոխայցելությունների վերաբերյալ, որոշվեց համատեղ ուսումնամարզական հավաքներ եւ մրցաշարեր անցկացնել: Լիտվայի ԱՕԿ-ի նախագահ Արբուրաս Պավլիոնասը եւ գլխավոր քարտուղար Պետրուս Ստասուսան ՀԱՕԿ-ի ղեկավարներին ծանոթացրեցին իրենց գործերին, ինչպես նաեւ՝ խնդիրներին: Լիտվան խորհրդային հանրապետություններից առաջինն է, որտեղ ազգային օլիմպիական կոմիտե է ստեղծվել: ԼԱՕԿ-ը բավականին նպաստավոր վիճակում է: Արդեն լուրջ ծրագրեր են մշակվել՝ կապված Միդնեյում կայանալիք օլիմպիական խաղերի հետ: Ինչպես նշեց պրն Ավետիսյանը, Լիտվայի ԱՕԿ-ի եւ պետական կառույցների միջեւ սերտ համագործակցություն է հաստատվել: Շատ հարցեր լուծվում են սպորտի նախարարության հետ համատեղ: Ի դեպ սպորտի նախարարը հայտնի բասկետբոլիստ Ռիմաս Կուրտինայտիսն է:

ԼԱՕԿ-ի համար ֆինանսական լուրջ աջակցություն է «Պեպսի» վիճակախաղը: Այն զգալի գումարներ է բերում օլիմպիական կոմիտեին: Ի դեպ, ՀԱՕԿ-ի ղեկավարները եղան վիճակախաղի հարկաքաշմանում:

Պրն Ավետիսյանը նշեց, որ համարյա ոչ մի տարբերություն չկա երկու երկրների ԱՕԿ-ների կառուցվածքների միջեւ:

Հանդիպումը մեծ արձագանք էր գտել Լիտվայում: Հանրապետությունում լույս տեսնող շուրջ 200 թերթերում գրվեց դրա մասին: Խոշոր հաղորդում տրվեց նաեւ հեռուստատեսությամբ:

ՀԱՕԿ-ի ղեկավարները նշում են, որ լիտվացիները բավականին մարզական ու մարզասեր են: Մարզական միջոցառումների ժամանակ մարզասրահները լեփ-լեցուն են: Մայիսի 9-ին անցկացված «Օլիմպիական գարուն» միջոցառմանը ներկա էր 30-40 հազար մարդ:

Ալեքսան Ավետիսյանը, որը միաժամանակ ծյուդոյի հանրապետական ֆեդերացիայի նախագահն է, օգտվելով ընձեռված հնարավորությունից, փոխշահավետ պայմանագիր կնքեց Լիտվայի ծյուդոյի ֆեդերացիայի հետ: Լիտվայի մարզական գործիչներին շատ հետաքրքրում ծաղկածորի օլիմպիական բազան, եւ նրանք պատրաստվում են աշնանը այցելել Հայաստան:

Այո՛, ՀԱՕԿ-ի միջազգային կապերը ընդլայնվում են: Նախատեսվում է մոտ ժամանակներս նմանօրինակ համաձայնագիր կնքել նաեւ Վրաստանի եւ Ուկրաինայի ազգային օլիմպիական կոմիտեների հետ:

ԹԵՆԻՍ

Չհաղթահարված արգելք

Անթալիայում (Թուրքիա) անցկացվեց աշխարհի կանանց թիմային առաջնության ֆեդերացիայի գավաթի երկրորդ խմբի ընտրական մրցաշարը, որին մասնակցեցին 26 երկրների հավաքականներ: Թիմերն ըստ վիճակահանության տարանվել էին 4 հնգյակների (յուրաքանչյուրում 6-ական թիմ): Սիայն առաջին տեղեր գրավող հավաքականներն էին իրավունք ստանում պայքարը շարունակելու:

Հայաստանի թիմը ընդգրկված էր 3-րդ ենթախմբում: Մեր թենիսիստուհիները 2-1 հաշվով պարտության մատնեցին Ալբանիայի, 3-0 հաշվով՝ Բոլոմիայի թիմերին: Սակայն միեւնույն 1-2 հաշվով զիջեցին Թուրքիայի, Նորվեգիայի եւ Լյուքսեմբուրգի ներկայացուցիչներին եւ գրավեցին 4-րդ տեղը: Մեր ենթախմբում 1-ին տեղը գրավեց Լյուքսեմբուրգի թիմը, իսկ մյուս 3-ում հաղթեցին Վրաստանի, Դանիայի եւ Ֆինլանդիայի հավաքականները: Հայաստանի թենիսիստուհիներից գովեստի է արժանի հատկապես «Արարատ» ակումբի անդամ Սոնա Մարտիրոսյանը: Նա 4 հանդիպում շահեց եւ միայն մեկում պարտվեց: Բայց Սոնան զիջեց Լյուքսեմբուրգի թիմի առաջատարին, որը հաստատիչային դասակարգման ցուցակում բավականին բարձր 130-րդ տեղն էր զբաղեցնում:

Ավելացնենք, որ մեր հավաքականի կազմում ընդգրկված էին նաեւ Նաիրա Սանթրոսյանը, Թերեզա Սիմոնյանը եւ Լիլիթ Թեւոնյանը (բոլորն էլ «Հայաստան» ակումբ): Մեր թենիսիստուհիների հետ Անթալիա էր մեկնել մարզիչ Ռազմիկ Մուրադյանը:

Իտալիայի բաց առաջնությունը հաջող սկսեց Մայքլ Չանգը (ԱՄՆ), որը 6-2, 4-6, 6-3 հաշվով հաղթեց Անդրեյ Մեդվեդեւին (Ուկրաինա):

ՇԱԽՄԱՏ

Իլյումժինովի գավաթի համար

Էլիստայում շարունակվում են Կալմիկիայի նախագահ Կիրսան Իլյումժինովի գավաթի խաղարկության մրցումները:

Երկրորդ փուլ դուրս եկած 16 շախմատիստներն անցկացրեցին հերթական խաղերը: Հետաքրքիր է նշել, որ հանդիպումներից միայն 2-ում կողմերից մեկը առավելության հասավ հիմնական ժամանակում: Եվգենի Բարեեւը հաղթեց Միխայիլ Գուրեւիչին, Վալերի Սալովը՝ Գիա Գիորգաձեին: Երկուսում էլ 1.5-0.5 հաշիվ գրանցվեց: Մյուս 6 միկրոմրցախաղերում առայժմ հաշիվը 1-1 է: Այդպիսին է հաշիվը նաեւ մեր Ռաֆայել Վահանյանի եւ բուլղար գրոսմայստեր Կիրիլ Գեորգիեւի մրցադայրաում, որտեղ 2 դ-ոի գրանցվեց: Այժմ այս 6 մրցախաղերում կանցկացվեն կարճացված, իսկ եթե հարկ լինի, նաեւ կայծակնային դարտիաներ, որոնցից հետո հայտնի կդառնան հաջող եզրափակիչ փուլի բոլոր մասնակիցները:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքով

ՄԱՄՈՒԼ

«Ռեսպուբլիկա Արմենիայի» աշխատակազմի ընդվզումը գործելակերպի դեմ է

Պնդում է խմբագրակազմը

Ըստ էության, «Հայաստանի Հանրապետություն» թերթում երեկ տպագրվածին «Արեւելյան նոմենկլատուրային օրենքներով» հրապարակման տեսքին ավելացնելու ի՞նչ բան կա. հազվագյուտ լրագրողական կոլեկտիվի կամքը փորձում են տրորել նոմենկլատուրային տափանվով նախագահին աջակցած ՀՈՒԿ-ի ջանքերը փոխհատուցելու համար, երեկ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի խմբագրությունում հրավիրված մամուլի ասուլիսում ասաց գլխավոր խմբագրի տեղակալ, մինչեւ երեկ գլխավոր խմբագրի պատասխանատու Ասոս Գազազյանը ինչպես ինքն ասաց, դժվարանալով հասկանալ, թե իր աթոռն ինչո՞ւ է պարտավոր զիջել «դրսից եկած ինչ-որ մեկին»: Խնդիրը Աժ նախագահի կողմից նշանակված նոր խմբագրի Շամիրամ Աղաբեկյանի անձը չէ, այլ թերթի հիմնադիրներից մեկի խմբագրակազմի կամքը «բացահայտորեն անտեսելու» գործելակերպը, որ Աժ-ը կիրառում է «Հայաստանի Հանրապետություն» եւ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթերի նկատմամբ հիմնադրման օրից առանց կոլեկտիվի կարծիքը հարցնելու ազատելով եւ նշանակելով խմբագիրներին: Սա. ըստ խմբագրի տեղակալի. 46 հոգիանոց կոլեկտիվի առնվազն 45 անդամի կարծիքն է, որին իրավական շեշտադրումներ փորձեց հաղորդել թերթի աշխատակցուհի Զոլիտեսա Սմիրխանյանը. խմբագրակազմի հետ հաշվի չնստելու ամենագույն անթույլատրելի համարելով եւ, մասնավորապես ընդվզելով այն իրողության դեմ, որ գլխավոր խմբագիր է նշանակվել ՀՈՒԿ վարչության անդամը («Պետական թերթի խմբագիրն անկողմնակալ ոգիի լինի», ասաց նա, «մոռանալով, որ անցնող 6-7 տարիներին այդ թերթը եղել է եթե ոչ կուսակցական, ապա խիստ կուսակցականացված նույնիսկ Հայաստանի ընդդիմությանը վերագրել «ֆաշիստ» լինելու մեղքը») կոլեկտիվը պատրաստ է պայքարել իր իրավունքների համար ընդհուպ մինչեւ գործադուլ (որ, անշուշտ, անցանկալի համարվեց), ծայրահեղ դեպքում կդիմի դատարան, եւ ակնկալում է գործընկերների բարոյական աջակցությունը:

«Հարցուփորձից» պարզվեց, որ մայիսի 11-ին, այն բանից հետո, երբ Ասոս Գազազյանը հրավիրվել է Աժ եւ խոսրով Հարությունյանից տեղեկացել նշանակման մասին, հրավիրվել է կոլեկտիվի ընդհանուր ժողով, որի ընթացքում անհամաձայնություն հայտնելով Աժ նախագահի որոշմանը, խմբագրակազմը որոշել է գլխավոր խմբագիր նշանակել Գազազյանին: Այսպիսով, ստացվել է «կազուսային» իրավիճակ, երբ թերթի հիմնադիրն ու աշխատակազմը գլխավոր խմբագրի նշանակման հարցում տարակարծիք են: Թերթի կանոնադրության մեջ ասվում է, որ Ազգային ժողովը թերթի հիմնադիրն է, խմբագրակազմը համահիմնադիրը: Համահիմնադրի իրավասությունները որեւէ կերպով չեն հստակեցված, փոխարենը նշված է, որ խմբագրի պատասխանը տնօրինում է Աժ-ը. ասել է թե, Աժ կանոնակարգի հասկացմամբ Աժ նախագահը. այնպես որ, իրավական առումով վերջինս այնուամենայնիվ, իրավասություններ չի գերազանցել. մանավանդ, թերթը եթե ոչ ամբողջությամբ, ապա հիմնականում ֆինանսավորվում է պետբյուջեի հաշվին: Այլ հարց է, որ մարդկային առումով խմբագրակազմի հետ, նույնիսկ վերջինիս համահիմնադիր չլինելու պարագայում, անհրաժեշտ էր հաշվի նստել գոնե նախապես տեղեկացնելով պատրաստվող փոփոխության մասին: Ասոս Գազազյանի կարծիքով, պետական թերթի գոյությունն իմաստ ունի միայն եթե Աժ-ը թերթից «ձեռք քաշի», թերթը չի կորչի, կարող է պահել իմաստն եւ պատրաստ է անցնել անկախ կարգավիճակի:

Ասուլիսին ներկա էր եւ թերթի կանոնադրության մեջ ի սկզբանե «ներդրված» հակասությանը (երկու հիմնադիրների միաժամանակյա առկայությանը) անդրադարձավ Աժ կրթության, գիտության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նորընծա նախագահ Արամ Սկրտչյանը, որը մտահոգիչ համարեց պատասխանատուների խմբագիրների նշանակումը Աժ նախագահի կողմից, խոստանալով այդ թերթերի ֆինանսավորման խնդիրը քննարկել Աժ-ում: Ըստ նրա, թերթերին ներկայացվող պահանջների, ակնկալիքների շրջանակը նկատելիորեն փոխվել է, ուստի օրինաչափ է նաեւ ԳԽ-ից մնացած ժառանգության (խմբագիրներ նշանակելու առումով) վերանայումը:

Ասուլիսը չէր ավարտվել, երբ խմբագրություն ժամանեցին Աժ աշխատակազմի ղեկավար Տիգրան Բալայանը եւ Աժ նախագահի խորհրդական Վահագն Սկրտչյանը: Շամիրամ Աղաբեկյանին թերթի խմբագրակազմին ներկայացնելու նպատակով Իրավիճակը հարթվեց գլխավոր խմբագրի աշխատասենյակում ասուլիսին հրավիրված լրագրողների եւ խմբագրակազմի փոխատեղությամբ. թերթի նոր խմբագիրը եւ Աժ նախագահի ներկայացուցիչները զրուցեցին կոլեկտիվի հետ մեր տեղեկությունների համաձայն, պարզաբանելով վերը նշված կանոնադրական նորությունները եւ նոր խմբագիր ունենալու առթիվ շնորհավորեցին աշխատակիցներին: Կոլեկտիվը, սակայն, պայքարելու է մինչեւ վերջ, հավաստեց Ասոս Գազազյանը ենթադրություն հայտնելով, թե «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի այսօրվա համարը չի տպագրվի:

Մեր կողմից ավելացնենք, որ տիկին Շամիրամ Աղաբեկյանը մեր լավագույն, ամենափորձառու լրագրողներից է, հետեւաբար սխալ է նրա նշանակումը դիտարկել որպես «ՀՈՒԿ-ի ջանքերի փոխհատուցում», մանավանդ որ նա նշանակվել է մի պատասխանի, որը մինչ այդ փաստորեն թափուր էր:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
. ԵՐԵՎԱՆՈՒՄ
ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

ջինանյութերի, էլեկտրական սարքերի, գրասենյակային եւ տնային կահույքի աճուրդի,
որը տեղի կունենա 1998 թ. մայիսի 16-ին,
Գրիբոյեդով 60 հասցեում,
ժամը 8:00-ից մինչեւ ավարտվելը:

Աճուրդի անցկացման կարգի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների եւ ապրանքների դիտման համար, 1998 թ. մայիսի 15-ին, ժամը 9:00-12:00, Գրիբոյեդով 60 հասցեում կանցկացվի ապրանքների նախնական զրուցադրում եւ ցանկացողների ցուցակագրում:

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ս. թ. մայիսի 17-ին, ժամը 12-00-ին Աշտարակում, Վանի հերոսամարտը խորհրդանշող հուշակոթողի մոտ տեղի կունենա տոնահանդես նվիրված Վանի հերոսամարտի 83-րդ տարեդարձին: Ավտոբուսների մեկնումը կոնսերվատորիայի մոտից ժամը 11:00-ին:

«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Ո Ւ Շ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ամերիկյան ընկերությունը աշխատանքի է հրավիրում աշխատասեր եւ աչալուրջ մարդկանց (ցանկալի է բարձրագույն կրթությամբ):

Տեղերը սահմանափակ են:

Հարցազրույցը կկայանա ուրբաթ, ժ. 17[45] Վարդանանց նրբ. 8, «Հայկոմունենախագիծ» դահլիճ (Կինոյի տան մոտ).

Դիմել՝ Գեղամին

Ուզո՞ւմ եք նիհարել

անվնաս, պառանց դիետայի եւ ֆիզկուլտուրայի

Գրանցվեք հետեւյալ հեռախոսահամարով

52-93-53

ժամը 9-18-ը

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Անհայտ բացակայող ճանաչելու համար Սամվել Ջանիկի Նալբանդյանի (1965 թ., Նորքի V զանգ., Մառի փող. շ. 15, բն. 79) մասին տեղեկությունները հայտնել Խորհրդային շրջանի ժողդատարան:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ճաշասենյակի հունգարական «Վերսա» կահույք, լավ վիճակում (առանց սեղանի եւ աթոռների):

Զանգահարել 555122

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 14-ին, ժամը 14-ին, Գողների միության կլոր սրահում տեղի կունենա Ժաննա Հակոբյանի «Ինձ մի որոնեք» բանաստեղծությունների ժողովածուի քննարկումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

կիսանկուղային տարածք 132,6 քմ. ընդհանուր մակերեսով, վերանորոգված, ունի սանհանգույց.

Խոցեց Նալբանդյան 29.

Տեղեկությունների համար զանգահարել 57-16-16 հեռախոսահամարով.

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

4 սենյականոց բնակարան (Գավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն. 4).

Զանգահարել 72-89-83.

Robin Generators RGX3500

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

բենզինով աշխատող միաֆազ էլեկտրագեներատորներ: ☎ 529353

հզորություն	ծախս հգ	նոմ. հգ	աշխ. ժամ	տարող.
50 Հց	3.0 կվտ	2.5 կվտ	71 ժ	13 լ
60 Հց	3.5 կվտ	3.0 կվտ	61 ժ	

ԿՐԵԴԻՏ-ԵՐԵՎԱՆ ԲԱՆԿ CREDIT-YEREVAN BANK

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Շարունակելով համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ «Կրեդիտ-Երեւան» բանկը հանդիսանում է «Windsor Stock Trading Co. Ltd» խոշորագույն բրոքերային կազմակերպության լիազոր ներկայացուցիչը Հայաստանում:

Ներդնելով կարի նոր համակարգ, բանկը անմիջականորեն առք ու վաճառք է կատարում Լոնդոնի ֆոնդային բորսայում:

Վերոհիշյալ գործառնությունները կատարելու համար բանկը աշխատանքի է հրավիրում անգլերենի պարտադիր իմացությամբ եւ ցանկալի է տեխնիկական վերլուծություն անելու ունակությամբ երիտասարդ աղջիկների եւ տղաների:

Ցանկացողները մինչեւ մայիսի 22-ը դիմեն «Կրեդիտ-Երեւան» բանկի բորսային գործառնությունների բաժին:

Հեռախոս 524352

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՊԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Երգրամ Սեթ» հրատարակչության տպարան. Երեւան 23, Արշակունյաց 2. Պատվեր թիվ 65. Դասակ 69149. Գնահատ. 820. Տպաքանակը 3500. Ստորագրված է տպագրության 12.05.1998 թվին. 100 դրամ

digitised by A.R.A.R.@